



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍԻՎԻՏԱԿԱՆ • ՓՈՂ • ԿԱՐԿՈՒՄԵՆՏ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ 2014

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՊՏՀ խորհրդի նախագահի ուղերձը	5
ՀՊՏՀ ռեկտորի ուղերձը.....	7
Ներածություն	9
1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	10
2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ	25
3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	41
4. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ.....	46
5. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.....	49
6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	52
7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..	54
8. 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	60
9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ	65
Ամփոփում	75
Հավելվածներ.....	76







Հարգելի՛ բարեկամներ

Ուրախությամբ ենք արձանագրում մեր սիրելի կրթօջախի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատանքային ևս մեկ տարվա ձեռքբերումները, որոնք տեսանելի են և տևական աշխատանքի արդյունք են:

Տնտեսագետ կադրեր պատրաստող հայաստանյան ամենամեծ բուհը 2014 թ. շարունակել է իր աշխատանքները՝ միտված կրթության որակի բարձրացմանը, գիտահետազոտական ներուժի ամրապնդմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, նոր նախագծերի իրականացմանը: «Մենք փոխվում ենք» կարգախոսով սկսված բարեփոխումների գործընթացը կայուն և նպատակամետ քայլերով առաջ է ընթանում՝ քայլ առ քայլ հզորացնելով կրթօջախը, բարձրացնելով նրա հեղինակությունը:

Մրցունակ պետություն նշանակում է մրցունակ կրթական և գիտական համակարգ: Այսպես է սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում, որտեղ կրթության և գիտության ոլորտները կարևորագույն ուղղություններ են, և մենք մշտապես ուշադրության կենտրոնում ենք պահում երկրի կրթական համակարգի շարունակական կատարելագործման և արդիականացման խնդիրները:



Համաշխարհային զարգացումների ներկա համատեքստում հաստատանյան տնտեսության ուժեղացումն այսօր նոր մարտահրավերներ է առաջադրում: Այսօր դժվար է պատկերացնել մրցունակ լինելու գաղափարը, եթե ազգային տնտեսությունը հենված չէ առաջատար գիտելիքների վրա: Մեր գերխնդիրն է ուժեղացնել մեր տնտեսությունը, ինչը հնարավոր ենք համարում բանիմաց, պրոֆեսիոնալ և բարեխիղճ մասնագետների համախմբված աշխատանքով: Այս առումով, կարևոր է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դերը, որը տնտեսագետ կադրերի պատրաստման հեղինակավոր դարբնոց է:

Համոզված եմ, որ համալսարանի զարգացումը և համամասնորեն բոլոր ուղղություններով հաջողությունների արձանագրումը կմեծացնեն բուհի մրցունակությունը՝ շարունակաբար ապահովելով համալսարանի հեղինակավոր տեղը բարձրագույն կրթական ծառայությունների մատուցման շուկայում:

Հորդորում եմ գալիք 2015 թվականին նոր ուժերով շարունակել բարձրորակ տնտեսագետների պատրաստման պատասխանատու և շնորհակալ աշխատանքը, մշտապես ականջալուր լինել ժամանակի պահանջին և առաջ ընթանալ բարեփոխումների ճանապարհով:

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀՀ վարչապետ,
ՀՊՏՀ խորհրդի նախագահ





Հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ ուսանողներ

Ներկայացվող հաշվետվությունն ամփոփում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2014 թ. գործունեության հիմնական ընթացքը, արդյունքները, ձեռքբերումները, մատնանշում առկա խնդիրները: Մեկ տարվա աշխատանքի հիմքում մեր մեծ կոլեկտիվի ջանադիր աշխատանքն է, որի արդյունքում ունենք և՛ նշանակալի ձեռքբերումներ, և՛ բացթողումներ, որոնց լուծմանը պետք է միտված լինեն մեր ջանքերը գալիք տարում:

Անցած տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գործունեությունը թեև հարստացվել է նոր քայլերով ու ծրագրերով, սակայն մեր հիմնական ուղենշային նպատակը, այն է՝ կրթության որակի բարձրացումը, շարունակել է լինել գերակա: Այս նպատակին են միտված եղել ուսումնական գործընթացում կատարված որոշակի փոփոխությունները, սակայն խնդրի լիարժեք լուծման համար առջևում նախատեսվում են համալիր քայլեր: Կրթական ծառայությունների որակի բարձրացման համար սպասվում է հազեցած աշխատանք, օրակարգում է համալսարանի հավատարմագրման գործընթացը, ինչը նախատեսում է գործող չա-



փանիշներին բուհի գործունեության համապատասխանեցման լայնածավալ աշխատանք:

2014 թ. մեր գործունեությունը եղել է բազմաշերտ, շարունակվել են ուսումնական և ուսումնամեթոդական, գիտահետազոտական գործունեության և բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարելավմանը, միջազգայնացմանը, հասարակայնության հետ կապերի ամրապնդմանը, ուսումնադաստիարակչական և ֆիզիկական դաստիարակությանը, կրթական միջավայրի արդիականացմանը, տարատեսակ ծրագրերի արդյունքում համալսարանի հեղինակության բարձրացմանը միտված աշխատանքները: Ցանկանում եմ հատուկ ընդգծել, որ մեր հաջողություններում իրենց ներդրումն ունեն համալսարանի խորհրդի անդամները՝ ի դեմս խորհրդի նախագահ, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի:

Չնայած զգալի արդյունքներին՝ առկա են նաև հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրատապ է՝ հաշվի առնելով հայաստանյան կրթական շուկայում օրեցօր սրվող մրցակցությանը: Այս միտումների համատեքստում բուհերի մրցունակության գլխավոր ցուցիչը որակյալ կրթական ծառայության մատուցումն է, հետևաբար, չանտեսելով համալսարանի առաջընթացի համար անհրաժեշտ մյուս ուղղությունները, պետք է հետևողական աշխատանք կատարենք այս գլխավոր նպատակին հասնելու համար: Սա է պարտադրում մեր բարդ, պատասխանատու, բայց միևնույն ժամանակ պատվաբեր առաքելությունը:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունն ընդգրկում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2014 թվականի գործունեության հիմնական արդյունքները, ձեռքբերումներն ու առկա խնդիրները:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում շարունակվել է նախորդ տարիներին մեկնարկած արդյունավետ աշխատանքը՝ համակարգային փոփոխությունների, ուսումնական գործընթացի կատարելագործման, կրթության որակի բարելավման, ուսուցման տեխնոլոգիաների արդիականացման, գիտահետազոտական գործունեության զարգացման, արտաքին կապերի ընդլայնման և այլ ուղղություններով:

Հաշվետվությունն արտացոլում է համալսարանի գործունեության տարբեր բնագավառներում կատարված փոփոխությունների մանրամասն նկարագրությունը և իրերի վիճակը հաշվետու տարվա վերջի դրությամբ: Բացի դրանից, ներկայացվում են ենթակառուցվածքային, ռեսուրսային, որակական ցուցանիշներ՝ կապված ուսումնական գործընթացի արդյունքների, ինչպես նաև մի շարք նախագծերի հետ: Անաչառորեն վերլուծվել են թերությունները, բացահայտվել են հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները:





1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1.1. Կրթական գործունեության կազմակերպումը

Կրթական գործունեությունը համալսարանում իրականացվում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությանն առնչվող՝ ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության ու ներհամալսարանական նորմատիվ փաստաթղթերի, ՀՊՏՀ կանոնադրության և ՀՊՏՀ 2012-2016 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն:

Կրթական գործընթացը համալսարանում նպատակաուղղված է աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով օժտված, երկրի սոցիալ-տնտեսական պահանջմունքներին և ազգային առանձնահատկություններին համապատասխանող բարձր որակավորմամբ մասնագետների ձևավորմանը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագետների պատրաստումն իրականացվում է եռաստիճան կրթական համակարգով:

Համալսարանն ունի 6 ֆակուլտետ, 24 ամբիոն, հաստատված են բարձրագույն մասնագիտական կրթության 84 ծրագրեր, այդ թվում՝ բակալավրի պատրաստման 17՝ 11 մասնագիտացումներով, և մագիստրոսի պատրաստման 17՝ 39 մասնագիտացումներով:

15.11.2014 թ. դրությամբ համալսարանն ունի 834 աշխատող, որից 665-ը՝ հիմնական հաստիքային (այդ թվում 15-ը՝ Եղեգնաձորի մասնաճյուղում): Պրոֆեսորադասախոսական կազմի թիվը 374 է, որից՝ 1 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 27 գիտության դոկտոր, պրոֆեսոր, 7 գիտության թեկնածու, պրոֆեսոր, 5 գիտության դոկտոր, դոցենտ, 160 գիտության թեկնածու, դոցենտ, 74 գիտության թեկնածու, 11 դոցենտ և 83 հրավիրված անձինք, ովքեր հիմնականում պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում պետական կառավարման ապարատում, ֆինանսական ու բանկային համակար-




գերում: Համալսարանի 299 աշխատակից օգտվում է բժշկական ապահովագրությունից: Ապահովագրա-վճարների գերակշիռ մասը փոխհատուցում է համալսարանը:

Ուսումնական բեռնվաճությունը 2013-2014 ուսումնական տարում կազմել է 313889 ժամ, իսկ 2014-2015 ուսումնական տարում՝ 280065 ժամ (հավելված 1.1):

1.2. Կրթական գործունեության ցուցանիշները

Այժմ համալսարանում սովորում է 7211 ուսանող, որից առկա ուսուցման բակալավրիատում՝ 3337-ը, ինչը կազմում է բուհի ամբողջ ուսանողության 46.3%-ը, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 966-ը կամ ուսանողների ընդհանուր թվի 13.4%-ը, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 1899-ը կամ 26.3%-ը, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 1009-ը կամ 14.0%-ը: Ընդհանուր առմամբ, առկա ուսուցման համակարգում սովորում է ուսանողների 59.7%-ը (հավելված 1.2): Ըստ կրթության առանձին ձևերի՝ համալսարանի ուսանողների թիվը 2009-2014 թթ. ժամանակահատվածում ներկայացված է գծապատկեր 1.1-ում:



Գծապատկեր 1.1. Ուսանողների թիվը 2009-2014 թթ.



2014 թ. համալսարանի առկա ուսուցման բակալավրիատը թողարկել է 1147 շրջանավարտ, որից 145-ը ստացել են գերազանցության դիպլոմ: Հեռակա ուսուցման բակալավրիատը թողարկել է 377 շրջանավարտ, որից 4-ը ստացել են գերազանցության դիպլոմ: Առկա ուսուցման մագիստրատուրան թողարկել է 654 շրջանավարտ, որից 155-ը ստացել են գերազանցության դիպլոմ: Հեռակա ուսուցման մագիստրատուրան թողարկել է 447 շրջանավարտ, որից 7-ը ստացել են գերազանցության դիպլոմ: Այսպիսով՝ բուհը գերազանցության դիպլոմով ավարտել են բակալավրիատի շրջանավարտների 9.8%-ը և մագիստրատուրայի շրջանավարտների 14.7%-ը (հավելվածներ 1.5-1.8):

1.3. Ուսանողների ընդունելությունը

2014 թ. առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 926 տեղ, որից 60-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 866-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 70 (այդ թվում 5-ը՝ ՀՀ ՊՆ պատվերով) դիմորդ, իսկ վճարովի ուսուցման համակարգում՝ 873 դիմորդ: ԼՂՀ-ին հատկացված նպատակային տեղերը համալրել է 10 դիմորդ, սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունվել է 20 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 973 դիմորդ:


Առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 470 դիմորդ. 182-ը համալրել են ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ տեղերը, 288-ը՝ վճարովի ուսուցման համակարգինը: Գործատուների հետ համատեղ իրականացվող 9 մասնագիտացումներով մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը կազմակերպվել է համալսարանին հատկացված տեղերի հաշվին:

Հեռակա ուսուցման բակալավրիատ դիմել է 407 դիմորդ. մրցույթով ընդունվել են 339-ը:

Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 483 դիմորդ. մրցույթով ընդունվել են 378-ը:

2014 թվականին ուսուցման բոլոր ձևերում ընդունվել է 2160 ուսանող (հավելվածներ 1.3-1.4): 2009-2014 թթ. ուսանողների ընդունելության տվյալները ներկայացված են գծապատկեր 1.2-ում:





Գծապատկեր 1.2. Ուսանողների ընդունելության տվյալները 2009-2014 թթ.

1.4. Ուսման առաջադիմությունը

Ուսման առաջադիմությունը չափվում է բոլոր գնահատականների մեջ դրական գնահատականների տեսակարար կշռով և բարձր գնահատականներով սովորողների հարաբերական թվով:

Առկա ուսուցման բակալավրիատում 2013-2014 ուսումնական տարվա առաջադիմության ցուցանիշները, ըստ ֆակուլտետների և կիսամյակների, ներկայացված են 1.9-1.11 հավելվածներում:

Առկա ուսուցման բակալավրիատի I-III կուրսերի ուսանողների առաջադիմությունը 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 72.2, վերահանձնումից հետո՝ 84.9%: Միայն գերազանց առաջադիմությամբ սովորողների տեսակարար կշիռը քննաշրջանից հետո կազմել է 16.1, իսկ վերահանձնումից հետո՝ 16.2%: «Գերազանց» և «լավ» գնահատականներով սովորել է ուսանողների, համապատասխանաբար՝ 22.0 և 22.6%-ը: Երկրորդ կիսամյակի ցուցանիշները հետևյալն են. ընդհանուր առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 79.0, իսկ վերահանձնումից հետո՝ 86.2%: Գերազանց առաջադիմությամբ սո-



վորել է ուսանողների 16.2-16.3, «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ 23.1-23.3%-ը:

Առկա ուսուցման բակալավրիատի IV կուրսի ուսանողների առաջադիմությունը 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակում քննաշրջանից հետո՝ 76.8, վերահանձնումից հետո՝ 88.7% է: Միայն գերազանց առաջադիմությամբ սովորողների տեսակարար կշիռը և՛ քննաշրջանից, և՛ վերահանձնումից հետո 15.8% է, իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը՝ 16.5 և 16.6%:

2012-2013 և 2013-2014 ուսումնական տարիների առաջադիմության ցուցանիշների (հավելված 1.12) համադրումից ակնհայտ է՝ I-III կուրսերի ուսանողների ընդհանուր առաջադիմությունը առաջին կիսամյակում նվազել է 0.6, իսկ երկրորդում՝ բարձրացել 3.2 տոկոսային կետով:

Հեռակա ուսուցման բակալավրիատի ուսանողների առաջադիմության ցուցանիշները համեմատաբար ցածր են, ինչը բացատրվում է ընդունվողների վատ պատրաստվածությամբ (հավելվածներ 1.13-1.21)

Հեռակա ուսուցման բակալավրիատի I-IV կուրսերի ուսանողները սովորել են կրեդիտային հենքով: I կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում քննաշրջանից հետո 49.4 է, իսկ վերահանձնումից հետո՝ 78.1%: Միայն «գերազանց» գնահատականներով սովորել է ուսանողների 0,6, իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ 4.4%-ը: Երկրորդ կիսամյակի ցուցանիշները հետևյալն են. ընդհանուր առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 52.8, իսկ վերահանձնումից հետո՝ 76.1%, միայն «գերազանց» գնահատականներով սովորել է ուսանողների 0.6, իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ 6.5%-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատի ոչ կրեդիտային V կուրսում քննաշրջանից հետո ընդհանուր առաջադիմությունը կազմել է 49.1, վերահանձնումից հետո՝ 76.9%: Գերազանց առաջադիմությամբ սովորել է ուսանողների 3.5-3.7, «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ 11.6-14.1%-ը:

2012-2013 և 2013-2014 ուսումնական տարիների ուսման առաջադիմության ցուցանիշների համեմատությունից ակնհայտ է, որ



ընդհանուր առաջադիմության ցուցանիշը որոշ չափով նվազել է: Բարձր առաջադիմությամբ՝ հատկապես միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը շարունակում է մնալ ցածր (հավելված 1.22):

Առկա ուսուցման մագիստրատուրայի (հավելվածներ 1.23-1.26)

I կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 78.2, իսկ վերահանձնումից հետո՝ 94.7%, երկրորդ կիսամյակում, համապատասխանաբար՝ 81.9 և 91.1%: Այստեղ բարձր է «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը, ինչը բնական է, քանի որ մագիստրատուրա ընդունվել են համալսարանի բարձր առաջադիմությամբ շրջանավարտները:

Առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 78.0, վերահանձնումից հետո՝ 93.4%: Միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 27.7-28.2, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 14.5-14.8%:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայի (հավելվածներ 1.27-

1.31) I կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 65.8, իսկ վերահանձնումից հետո՝ 84.5, երկրորդ կիսամյակում, համապատասխանաբար՝ 54.2 և 74.8%:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայի II կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 63.5, վերահանձնումից հետո՝ 82.2%: Միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը և՛ քննաշրջանից, և՛ վերահանձնումից հետո կազմել է 5.7%, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 8.3%: Երկրորդ կիսամյակում առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 78.2, իսկ վերահանձնումից հետո՝ 87.3%: Միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 10.7, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողներինը՝ 19.5%:

Առաջադիմության այս ցուցանիշները հիմնականում օգտագործվում են ուսումնական գործընթացի կազմակերպման մակարդակի



ընթացիկ բնութագրման համար: Դրանք, անշուշտ, չեն կարող արտացոլել կրթության որակի ամբողջական պատկերը: Կրթության որակի ճիշտ պատկերը ստանալու համար հարկ է դիտարկել նաև ըստ իրենց մասնագիտության աշխատանքի տեղավորված շրջանավարտների, աշխատաշուկայում նրանց մրցունակության և առաջխաղացման ցուցանիշները:

Համալսարանից ուսման անբավարար առաջադիմության, զինվորական ծառայության մեկնելու և այլ պատճառներով 2013-2014 ուսումնական տարում ազատվել (հեռացվել) է առկա ուսուցման բակալավրիատից՝ 361, հեռակա ուսուցման բակալավրիատից՝ 243, առկա ուսուցման մագիստրատուրայից՝ 46 և հեռակա ուսուցման մագիստրատուրայից՝ 68 ուսանող, իսկ վերականգնվել է, համապատասխանաբար՝ 28, 54, 4 և 4 ուսանող (հավելված 1.32):

2013-2014 ուսումնական տարվա ուսման վարձի գեղչից, ըստ գործող կանոնակարգի, առաջին և երկրորդ կիսամյակներում համապատասխանաբար օգտվել է՝ առկա ուսուցման բակալավրիատի 394 և 474, հեռակա ուսուցման բակալավրիատի 132 և 49, առկա ուսուցման մագիստրատուրայի 83 և 105, հեռակա ուսուցման մագիստրատուրայի 112 և 41 ուսանող (հավելված 1.33):

2013-2014 ուսումնական տարում փոխատեղման արդյունքում II կուրսի 18 ուսանող վճարովի համակարգից անցել է անվճար համակարգ: III կուրսում կարգավիճակը փոխել է 17, IV կուրսում՝ 13 ուսանող (հավելված 1.34): Մագիստրատուրայի II կուրսում 38 ուսանող վճարովի համակարգից անցել է անվճար համակարգ (հավելված 1.35):

1.5. Կրթության որակը

Հայաստանի կրթական բարեփոխումներում որոշիչ է որակի ապահովման նոր, ժամանակակից համակարգի ստեղծման դերը: Որակի ապահովման համակարգի քաղաքականության և գործընթացների հիմքում ՀՀ կառավարության, ՀՀ ԿԳ նախարարության ռազմավարական ուղղություններն են, որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ուղղորդիչ փաստաթղթերը:



Որակի համակարգի ստեղծումը համալսարանում հատկապես կարևոր է ազատ, անկաշկանդ ակադեմիական բանավեճերի հարթակ ստեղծելու նպատակով, որտեղ գիտական միտքը և նորարարությունը, գործակցային հարաբերությունները հստակ արժեքային համակարգի ու որակի մշակույթի սկիզբ կդնեն: Որակի ներքին ապահովման բուհական համակարգի ձևավորումը համապարփակ բարեփոխումների ոչ միայն անբաժան մասն է, այլև հիմնական շարժիչ ուժը:

Որակի ապահովման համակարգի ստեղծմամբ և զարգացմամբ համալսարանը ձևավորում է բարեփոխումների մի շրջանակ, որը նպաստելու է բուհի կարողությունների վերլուծությանը, արժևորմանը և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև վարչական, ֆինանսական և ուսումնական գործունեության բարելավմանը:

2013 թվականի դեկտեմբերի վերջին Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի ֆինանսավորմամբ լույս է տեսել «ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ» ուսումնամեթոդական ուղեցույցը, որտեղ ներկայացված են բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման շրջանակը և գործունեության հիմնական սկզբունքները, ՀՊՏՀ որակի ներքին ապահովման հայեցակարգը, քաղաքականությունը և ընթացակարգերը, ինչպես նաև բուհի գործունեության հետադարձ կապի մեխանիզմները: Ուղեցույցը նախատեսված է համալսարանի վարչական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի, ուսանողների, ասպիրանտների, ինչպես նաև որակի ապահովման համակարգի հետազոտողների համար:

2014 թվականի հունվարի 20-ին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ է ներկայացվել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը», որն իրականացվել է համալսարանում ձևավորված՝ որակի ապահովման աշխատանքային խմբերի մասնակցությամբ:



Մայիսի 5-8-ը ՀՊՏՀ-ում, մայիսի 12-ին Եղեգնաձորի, իսկ մայիսի 13-14-ը Գյումրու մասնաճյուղերում տեղի է ունեցել արտաքին գնահատում, որն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագետների խումբը: Փորձագիտական այցի հիմնական նպատակն էր պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթերը՝ ավելի լավ պատկերացնելու փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեությունը:

Փորձագիտական վերլուծության արդյունքում ներկայացվել է փորձագիտական զեկույց, որն ընդգրկում է համալսարանի ձեռքբերումների մասին վկայություններ և խորհրդատվություն՝ աշխատանքների հետագա բարելավման նպատակով:

Փորձագիտական զեկույցում տեղ գտած խորհրդատվությունների հիման վրա մշակվել են «ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլան» և «ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների ժամանակացույց» փաստաթղթերը, որոնք հաստատվել են գիտական խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 14-ի նիստում: ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանը և ժամանակացույցը ներառում են համալսարանի գործունեության բոլոր բնագավառներին առնչվող լայնածավալ միջոցառումների համախումբ, որի արդյունքում ակնկալվում է կանոնակարգել և բարելավել համալսարանի գործունեությունը: Բարելավման գործողությունների իրականացման ժամանակահատվածն ընդգրկում է 2014-2018 թվականները:

Որպես մասնագիտական ուսումնական հաստատության հավատարմագրման գործընթացի պարտադիր պայման՝ «ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանը» և «ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների ժամանակացույցը» 2014 թվականի հոկտեմբերին ներկայացվել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ:

2014 թվականին ևս, որակի ապահովման բաժինը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության կառավարման ամբիոնի հետ համատեղ, շարունակել



է ակտիվ մասնակցությունը համալսարանի միջազգայնացման գործընթացներին՝ հիմք ընդունելով այն դիրքորոշումը, որ միջազգայնացումը որակի ապահովման կարևորագույն բաղադրիչներից է՝ ուղղված Հայաստանի կրթության որակի ճանաչմանը, համադրելիության և մրցունակության ապահովմանը: Այս ասպարեզում նույնպես ակտիվ գործունեություն է ծավալվել՝ ապահովելով մասնագիտական կրթության որակի ոլորտում միջազգային կառույցներին ՀՊՏՀ անդամակցումը և արտերկրի համալսարանների հետ համագործակցության զարգացումը:

Մասնավորապես՝ համալսարանը ներգրավված է Տեմպուսի 7 ծրագրերում, որոնցից մեկի՝ «ARARAT» ծրագրի համակարգողն է: Այդ ծրագրերն են.

1. «Համալսարան-գործադրու» հայկական համակարգող գործակալություն, «ARARAT», 2012-2015 թթ.

Ծրագիրը միտված է համալսարան-գործատու կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը: Ծրագրի նպատակն է, կրթության բոլոր շահակիցների հետ աշխատելով, ապահովել կրթության և աշխատաշուկայի կապը և իրականացնել կրթական բարեփոխումներ՝ հիմնվելով աշխատաշուկայի պահանջների վրա:

2. «Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» (HEN-GEAR), 2012-2015 թթ.

Ծրագրի նպատակն է ստեղծել բարձրագույն կրթական հաստատությունների և գործատուների համատեղ միավորում, նպաստել Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացմանը և մարդկային կապիտալի գնահատմանը:

3. «Բարձրագույն կրթության կառավարման մագիստրոսական ուսումնական ծրագիր՝ կրթական վերափոխումներ իրականացնող առաջնորդների պատրաստման նպատակով» (MAHATMA), 2012-2015 թթ.

Ծրագրի նպատակն է եվրոպական ուղենիշերին և սկզբունքներին համապատասխան կրթության կառավարման ժամանակակից ծրագրի մշակումը, ինչը նաև հիմք կծառայի համալսարանի կրթական ծրագրերի բարեփոխումների համար:

4. Հայաստանի բուհերի որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնում (ESPAQ), 2013-2016 թթ.



Կմշակվեն որակի ապահովման գործընթացներին, մասնավորապես՝ ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության աշխատանքներին ուսանողների մասնակցության նոր ձևաչափեր:

5. *Ջայքուրգի սկզբունքների հիման վրա կրթական III մակարդակի կառուցվածքային զարգացում (VERITAS), 2013-2016 թթ.*

Ծրագրի շրջանակներում կմշակվեն կրթական III աստիճանի բնութագիրը, կառուցվածքը և իրականացման կառուցակարգերը:

6. *«Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվեպլոդականությանը. բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում՝ արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով» (GOVERN), 2013-2016 թթ.*

Ծրագրի նպատակը համալսարանների գործունեության կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված կառուցակարգերի և մոդելների մշակումն է:

7. *Մարդկային գործոնի միջոցով կրթական հաստատությունների առաջխաղացում (PEOPLE), 2013-2016 թթ.*

Ծրագրի նպատակը մարդկային ռեսուրսի ռազմավարական կառավարման միջոցով համալսարանի զարգացման ապահովումն է:

Նշված ծրագրերում ՀՊՏՀ-ն համագործակցում է եվրոպական ավելի քան 20 համալսարանների հետ, ինչը հուսով ենք, կնպաստի լավագույն փորձի տեղայնացմանը, համալսարանը միջազգայնորեն ճանաչելի դարձնելուն և որակավորումների ճանաչմանը: Ծրագրերի գործունեության ընթացքում բուհը հյուրընկալել է եվրոպական մի շարք գործընկեր համալսարանների ներկայացուցիչների, իսկ մի խումբ աշխատակիցներ և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ վերապատրաստվել են եվրոպական գործընկեր համալսարաններում:

«HEN-GEAR» ծրագրի շրջանակներում շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման նպատակով 2014 թվականին ստեղծվել է ՀՊՏՀ բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների բազա, որը հասանելի կլինի հայաստանյան և արտասահմանյան գործատուներին:



Բացի վերը նշված ծրագրերից, որակի ապահովման բաժինը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության կառավարման ամբիոնի հետ համատեղ, ներկայացրել է ծրագրային առաջարկ Հարավային Կովկասում շվեյցարական համագործակցության գրասենյակ: Նախագիծը արժանացել է հավանության և գտնվում է իրականացման փուլում: Նպատակը հանրային քննարկումների միջոցով փորձագիտական բանավեճերի կազմակերպումն է ներառական տնտեսության ու սոցիալապես համերաշխ հասարակության ձևավորմանն առնչվող տասը ամենակարևոր գործոնների շուրջ, միևնույն ժամանակ, նպաստելով աղքատության մեղմմանը և տնտեսության բարգավաճմանը:

Հաշվետու տարում ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնի նախաձեռնությամբ հանրապետությունում առաջին անգամ կազմակերպվել են «Ստանդարտացման միջազգային օր» ու «Որակի համաշխարհային օր և հանդիպում գործատուների հետ» միջոցառումները, որոնց մասնակցել են ՀՀ արտադրական տարբեր ձեռնարկությունների և որակի, մաքսային, հավատարմագրման ու այլ կազմակերպությունների ղեկավարներ:

1.6. Ուսանողների փորձառությունների կազմակերպումը

2013-2014 ուսումնական տարում կազմակերպվել է 5 փորձառություն.

1. արտադրական՝ IV կուրսերի համար (834 ուսանող), 8 շաբաթ տևողությամբ՝ փետրվարի 10-ից ապրիլի 6-ը,
2. գիտահետազոտական՝ առկա ուսուցման մագիստրատուրայի II կուրսերի համար (483 ուսանող), 10 շաբաթ տևողությամբ՝ փետրվարի 10-ից ապրիլի 19,
3. գիտահետազոտական՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայի II կուրսերի համար (320 ուսանող), 10 շաբաթ տևողությամբ՝ ապրիլի 17-ից հունիսի 20-ը,
4. գիտամանկավարժական՝ առկա ուսուցման մագիստրատուրայի II կուրսերի համար (496 ուսանող), 6 շաբաթ տևողությամբ, նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 14-ը,



5. գիտամանկավարժական՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայի II կուրսերի համար (326 ուսանող), 6 շաբաթ տևողությամբ՝ նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 14-ը:

Համալսարանը ուսանողներին աշխատաշուկայում ներգրավելու նպատակով համագործակցել է մի շարք ընկերությունների հետ, ուսանողներին մասնակից դարձրել նրանց կազմակերպած տարատեսակ ծրագրերին և ստաժավորմանը, ինչի արդյունքում 50 ուսանող ընդունվել է աշխատանքի: Աջակցել է նաև ուսանողների աշխատանքի տեղավորմանը՝ տարբեր կազմակերպություններից թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվություն ստանալով և դա հրապարակելով համալսարանի պաշտոնական կայքի (asue.am) «Կարիերայի կենտրոն» էջում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձբաղվածության պետական գործակալության» հետ համատեղ, 2014 թվականի հունիսի 6-ին համալսարանում կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցել է 54 կազմակերպություն՝ առևտրային բանկեր, ապահովագրական ընկերություններ, տնտեսության տարբեր ճյուղերը ներկայացնող ձեռնարկություններ, որոնք շրջանավարտներին ներկայացրել են իրենց մոտ առկա թափուր աշխատատեղերը, ինչպես նաև վերապատրաստման և փորձառության ծրագրերը: Աշխատանքի տոնավաճառի ընթացքում այցելուները ծանոթացել են մասնագիտական զարգացման այլ հնարավորությունների:

Հաշվետու տարում ուսանողների փորձառությունների կազմակերպման և առաջընթացի նպատակով համալսարանում կազմակերպվել են նաև բազմաբնույթ այլ տեղեկատվական միջոցառումներ:

1.7. Ուսումնամեթոդական աշխատանքներ

2014 թվականին համալսարանի ուսումնամեթոդական աշխատանքների բնագավառում իրականացվել է կրթության համակարգի արդիականացմանն ուղղված միջոցառումների շարք հետևյալ ուղղություններով.

1. Վերամշակվել և արդիականացվել են բակալավրիատի ու մագիստրատուրայի մի քանի մասնագիտությունների և մասնագիտա-



ցումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը: Ամբիոնները շարունակել են բակալավրիատի ուսումնական մոդուլների թեստային բազաների բարելավումն ու հարստացումը:

2. Գիտական խորհրդի 2014 թվականի փետրվարի 7-ի նիստում որոշվել է ուսումնական տարվա հաստիքային բեռնվաճության բաշխումն ավարտել օգոստոսի վերջին. հեռակա ուսուցման ընդունելության արդյունքով ձևավորված (հաշվարկված) կուրսերի ուսումնական բեռնվաճությունը և ուսումնական տարվա ընթացքում, հիմնական բեռնվաճությունը բաշխելուց հետո, նոր հոսքերի կամ խմբերի ձևավորումից առաջացող ժամերը բաշխել ժամավճարով:

3. Գիտական խորհրդի 2014 թվականի մարտի 26-ի նիստում հաստատվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»:

4. ՀՊՏՀ խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի որոշմամբ միացվել են կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնները:

5. Գիտական խորհրդի 2014 թվականի մայիսի 7-ի նիստի որոշմամբ միացյալ ամբիոնն անվանվել է «Կոմերցիա և բիզնեսի կազմակերպում»: Նույն նիստում հաստատվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում օտարերկրացի ուսումնառողների ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման կարգը»:

6. ՀՊՏՀ խորհրդի 2014 թվականի հունիսի 19-ի որոշմամբ համալսարանի կազմակերպական կառուցվածքում ստեղծվել է ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտորի հաստիք: Նույն որոշմամբ միացվել են հայոց և ռուսաց լեզուների և օտար լեզուների ամբիոնները՝ անվանվելով «Լեզուների ամբիոն»:

7. Գիտական խորհրդի 2014 թվականի հունիսի 23-ի նիստի որոշմամբ առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական կուրսերում հանվել է ամփոփիչ քննությունը և ավարտական աշխատանքը բոլոր ուսանողների համար դարձել է պարտադիր: Ավարտական աշխատանքին հատկացվել է 18 կրեդիտ: Նույն նիստի որոշմամբ երկրորդ կիսամյակում որպես «Հայոց պատմություն» առարկայի գիտելիքի ստուգման ձև ընտրվել է ստուգարքը:



8. Գիտական խորհրդի նոյեմբերի 14-ի նիստում հաստատվել է «Կրթական ծրագրեր մշակելու ուղեցույցը», որը պատրաստվել է եվրոպական կրթական չափանիշներին համապատասխան և արժանացել միջազգային փորձագետների հավանությանը: Կրթական ծրագրերի մշակման առանցքը, ըստ ներկայացվող ձևաչափի, հետևյալն է՝ կրթական ծրագրերը կազմվում են վերջնարդյունքների հիման վրա, որոնք համապատասխանեցվում են աշխատաշուկայի պահանջներին: Առաջիկայում՝ թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների ու մասնագիտացումների կրթական ծրագրերը կկազմվեն այդ տրամաբանությամբ՝ ոչ թե դասավանդումը, այլ ուսումնառությունը կարևորող սկզբունքով՝ հաշվի առնելով նաև գործատուների պահանջները:

Խնդիրներ

Արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում կրթական բարեփոխումների և ուսման առաջադիմության ձեռքբերումները՝ կարծում ենք՝ առկա են նաև հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրամայական պահանջ է: Այսպես.

1. Թեև վերջին տարիներին որոշակի աշխատանքներ են կատարվել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարելագործման ուղղությամբ, սակայն այդ ասպարեզում նկատվել են բացթողումներ: Մասնավորապես՝ թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի կրթական ծրագրերում առկա են միմյանց կրկնող կամ ժամանակի պահանջներին չհամապատասխանող դասընթացներ, որոնք, մեղմ ասած, չեն նպաստում կրթության որակի բարձրացմանը: Կարծում ենք՝ այդ թերությունը կվերացվի կրթական նոր ծրագրեր մշակելիս:

2. Բավարար չափով և արդյունավետությամբ չեն կիրառվում կրթական նորագույն տեխնոլոգիաները, ինտերակտիվ ուսուցման եղանակները: Դասընթացների մի զգալի մասը ուսանողներին գիտամեթոդական և գործնական հմտություններ չի հաղորդում, չի նպաստում նրանց մասնագիտական ունակությունների աճին:

3. Թեև սեմինար և գործնական պարապմունքների անցկացման արդյունավետության բարձրացման հարցերը մշտապես քննարկվել են գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերում, սակայն դեռևս



տեսանելի տեղաշարժ չի արձանագրվել: Գրեթե չեն կիրառվում իրավիճակային վերլուծություններ, խմբային գործարար խաղեր, գործնական հաշվարկներ: Ցածր է նաև բոլոր տեսակի փորձառությունների կազմակերպման արդյունավետությունը:

4. Որոշ ամբիոններ և դասախոսներ թերանում են իրենց աշխատանքային պարտակա-նությունները կատարելիս. ժամանակին չեն նորացնում առարկայական ծրագրերը և թեստային բազաները:

5. Կազմակերպական թերացումների և անբավարար հսկողության պատճառով դեռևս չեն վերացել ուսումնական և աշխատանքային կարգապահության խախտումները, զգալի է նաև անհարգելի բացակայող ուսանողների թիվը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ

2.1. Գիտահետազոտական գործունեությունը

Համալսարանական գիտության և բարձրագույն կրթության զարգացումը տնտեսության առաջընթացի և տնտեսական արդյունավետ քաղաքականության հիմնական երաշխիքն է: Համալսարանական հիմնարար գիտության աստիճանական առաջընթացը, որպես ժամանակի հրամայական, բարձրտեխնոլոգիական տնտեսության ձևավորման առանցքային նախադրյալն է: Կասկած չի հարուցում՝ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների բարգավաճման անկյունաքարը համալսարանական գիտության և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված գիտելիքի տնտեսությունն է: Գիտության վրա հիմնված առաջատար տեխնոլոգիաներն ու նորաստեղծ տնտեսությունը գիտելիքի վրա հիմնված հասարակության մոդելի կարևորագույն հիմնադրույթներն են: Վերջինիս առաջընթաց զարգացումն ու կայունությունը հիմնված են հասարակության և նորաստեղծական տնտեսության արդյունավետ գործունեությունը ապահովող գիտելիքի ստեղծման և կիրառման վրա՝ նպատակ ունենալով բարձրացնել երկրի բնակչության բարեկե-



ցության մակարդակը: Ընդհանուր առմամբ, տնտեսությունը համարվում է գիտելիքի վրա հիմնված, երբ գիտելիքը և մասնագիտական հմտությունը դառնում են զարգացման կարևորագույն ռազմավարական ռեսուրսներ, իսկ պետական կառավարման, տնտեսական, սոցիալական, մշակութային, բնօգտագործման և այլ ոլորտների նպատակները ձեռք են բերվում գիտելիքի, գիտական վերլուծությունների, քննարկումների և փոխգործակցության արդյունքում:

Համալսարանի գիտական խորհրդի 2014 թվականի մարտի 26-ի նիստում հաստատվել և գործողության մեջ է դրվել «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը», համաձայն որի՝ առաջին անգամ հայտարարվել է ներհամալսարանական գիտաուսումնական խմբերի հետազոտական աշխատանքների կատարման մրցույթ՝ գիտական և ակադեմիական ուղղություններով: Միաժամանակ, շարունակվել են «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունները:

Գիտաուսումնական խմբերի թեմաներին մասնակցում է 43 հետազոտող՝ դասախոսներ, ասպիրանտներ և մագիստրանտներ (հավելված 2.1): Առաջին անգամ ձևավորվել է միջազգային գիտաուսումնական խումբ՝ «Ֆինանսական ծառայությունների հասանելիություն» խորագրով, որտեղ ընդգրկվել են օտարերկրյա մագիստրանտներ, ովքեր ուսանում են ՀՀ և Սիրիայի Արաբական Հանրապետության միջկառավարական համաձայնագրի շրջանակներում:

Ընդհանուր առմամբ, ներհամալսարանական գիտաուսումնական խմբերի թեմաներում և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գիտահետազոտական ուղղություններում ներգրավված է բուհի պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 26%-ը:

2.1.1. Համալսարանի գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունները 2014 թ.

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում շարունակվել է 58 ամբիոնային թեմաներով գիտահետազոտական աշխատանքների (հավելված 2.2), ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 4



դրամաշնորհային, ներհամալսարանական 8 գիտաուսումնական խմբերի թեմաների և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 5 գիտական ուղղություններով ծրագրերի իրականացումը:

Ամբիոնային հետազոտությունները կատարվել են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բանասիրության բնագավառներում: Ի հավելումն դրանց՝ որպես համալսարանի գիտության բնագավառի նորաստեղծություն կարող են դիտվել ներհամալսարանական գիտաուսումնական խմբերի աշխատանքների մեկնարկը, նրանց կայքէջերի ստեղծումը՝ նախագծերի ընդհանուր բնութագրերի, հրապարակումների, միջոցառումների, նորությունների, հայտարարությունների և մեդիաէջերի համապատասխան ենթաբաժիններով:

Գիտաուսումնական խմբերի թեմաներն են.

1. **«Ֆինանսական ծառայությունների հասանելիության արդի հիմնահարցերը ՀՀ-ում»** (խմբի ղեկավար՝ գիտության բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ Խ.Մխիթարյան):
2. **«Սպառողների (ուսանողների) բավարարվածության հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթական ծառայությունների շուկայում»** (խմբի ղեկավար՝ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր Կ.Աթոյան):
3. **«Ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը որպես տնտեսության զարգացման ռազմավարական ուղղություն»** (խմբի ղեկավար՝ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի ղեկան, տ.գ.թ., դոցենտ Ա.Մարգարյան):
4. **«ՀՀ-ում ցանցային տնտեսության կայացման նախադրյալների գնահատումը և զարգացման հիմնախնդիրները»** (խմբի ղեկավար՝ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Սարգսյան):
5. **«Հայաստանի Հանրապետությունում երկրատեղեկատվական համակարգերի կիրառումը անշարժ գույքի կառավարման բնագավառում»** (խմբի ղեկավար՝ բնօգտա-



գործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գևորգյան):

6. **«ՀՀ արտահանման ներուժի իրացման լոգիստիկ հիմնախնդիրները»** (խմբի ղեկավար՝ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ժ/պ., տ.գ.թ., դոցենտ Գ.Նազարյան):
7. **«Մոտիվացիայի բարձրացման հիմնախնդիրները բարձրագույն կրթության ոլորտում»** (խմբի ղեկավար՝ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ., Մ.Բադալյան):
8. **«Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները ՀՀ-ում»** (խմբի ղեկավար՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Մ.Մովսիսյան):

2014 թվականին համալսարանում կատարվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ հետևյալ 4 թեմաները.

1. **«ՀՀ գիտակրթական համակարգի ռեսուրսային բազան, ինովացիոն-կոմունիկացիոն ապահովվածությունը և ոլորտում ներդրումային միջավայրի ու ներուժի զարգացման գերակայությունները»** (թեմայի ղեկավար՝ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր Յու.Սուվարյան):
2. **«Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում»** (թեմայի ղեկավար՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ, տ.գ.թ., պրոֆեսոր Ի.Տիգրանյան):
3. **«Ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը որպես տնտեսության զարգացման ռազմավարական ուղղություն»** (թեմայի ղեկավար՝ տնտեսության կարգավորման և ՄՏՀ ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ա.Մարգարյան):
4. **«Տնտեսական մրցակցության պաշտպանության խնդիրները պետական գնումների գործընթացում»** (թեմայի ղեկավար՝ ասպիրանտ Գ.Ավետիսյան):



Բացի վերոնշյալից՝ համալսարանի առանձին աշխատակիցներ ներգրավված են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում իրականացվող հետազոտություններում, ինչպես նաև միջազգային մի շարք ծրագրերում:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2013 թվականի գիտական ուսումնասիրությունները հրատարակվել են «Տնտեսագետ» հրատարակչությունում: «Ամբերդ» մատենաշարն ընդգրկում է 17 կոլեկտիվ մենագրություններ (հավելված 2.3):

Ուսումնասիրվել են ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների հետազոտական կարիքները, և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի խորհրդի հավանությամբ հայտարարվել է 2014 թվականի հետազոտական թեմաների մրցույթ: Հաստատվել են 5 հետազոտական թեմաներ՝ 45.895 մլն դրամ ֆինանսավորումով և 43 կատարողով (հավելված 2.4):

Իրականացվել են 5 մագիստրոսական հետազոտություններ, որոնց գիտական զեկույցները ներկայացվել են հրատարակության (հավելված 2.5):

Հետազոտական թեմաների և մագիստրոսական հետազոտական ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է 12 սեմինար, և ըստ հետազոտական փուլերի քննարկվել են կատարված աշխատանքները:

«Պարենային ապրանքների շուկաների մարքեթինգային հետազոտություններ» թեմայի շրջանակներում համալսարանի պաշտոնական կայքի «Ամբերդ» կենտրոնի էջում տեղադրվել են 7 խորագրերով 11 վիճակագրական նյութերի ժողովածուներ (տվյալների արխիվներ, գործարար տեղեկատու, ավելի քան 10.000 ապրանքի շուկայական գների տեղեկատու, հետազոտության 2 ամփոփ հաշվետվություններ): Կայքում հրապարակվել են նաև «Ամբերդ» կենտրոնի շրջանակներում իրականացվող գիտական սեմինարների վերաբերյալ տեղեկատվություններ (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Ֆեյսբուք» և «Լինկեդին» սոցիալական ցանցերում գործարկվել են ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի պաշտոնական էջերը:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ: Մագիստրոսական հետազոտություններում ներգրավված ուսանողների համար



2014 թվականի մայիսի 22-ին համալսարանում դասախոսությամբ հանդես է եկել Սոֆիայի պետական համալսարանի «Վիա Եվրասիա» կենտրոնի փորձագետը: Սեպտեմբերի 16-18-ին ՌԴ Ա.Մ.Գորչակովի անվան Հանրային դիվանագիտության աշակցման հիմնադրամի աշակցությամբ և ՌԴ ճանաչված փորձագետների մասնակցությամբ համալսարանում կազմակերպվել են վարպետաց դասեր պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար: Տեղի են ունեցել հանդիպումներ արտերկրից և Հայաստանից հրավիրված փորձագետների հետ, կազմակերպվել են դասախոսություններ և ձեռք են բերվել հետագա համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություններ:

Նշված ժամանակահատվածում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակիցները հրատարակել են 4 մենագրություն, 17 գիտական հոդված, հրատարակության են ներկայացրել 8 հոդված (ընդամենը՝ 25, որից 8-ը՝ միջազգային ամսագրերում):

Վերանայվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների մրցույթի կազմակերպման և փորձագիտական գնահատման կարգը:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ մի շարք նախարարություններ (Ֆինանսների, էկոնոմիկայի, կրթության և գիտության, աշխատանքի և սոցիալական հարցերի, սփյուռքի, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, բնապահպանության, գյուղատնտեսության) ներկայացրել են սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների հետազոտությունների հայտեր, որոնց հիման վրա 2015 թվականի հունվարին կհայտարարվի ներհամալսարանական գիտական դրամաշնորհների մրցույթ:

2.1.2. Գիտաժողովներ, սեմինարներ

2014 թ. հոկտեմբերի 29-31-ը անցկացվել է համալսարանի 24-րդ գիտաժողովը՝ «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ» խորագրով: Լիագումար նիստին «Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների վիճակը և հեռանկարները» զեկուցումով հանդես է եկել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը, իսկ «Գի-



տական հետազոտությունների և ուսումնական գործընթացների հնտեզրման արդի հիմնախնդիրները» զեկուցումով՝ համալսարանի գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Վարդանյանը:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունները», «Ֆինանսական շուկաներ և ենթակառուցվածքներ», «Միջազգային տնտեսական համագործակցություն և կրթության որակի ապահովում», «Կայուն զարգացման ապահովում» խորագրերով՝ համապատասխան բաժանմունքներում. ներկայացվել է 200-ից ավելի զեկուցում:

Հրատարակության գործընթացում են գիտաժողովի նյութերը՝ շուրջ 75 մամուլ ծավալով:

Համալսարանի գիտական գործունեությանը նոր շունչ են հաղորդել գիտական բազմաթիվ սեմինարները, որոնք անդրադարձել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող թեմաներին, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի շրջանակներում կատարված հետազոտություններին:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են նաև կլոր սեղաններ, քննարկումներ ու գիտական բանավեճեր՝ նվիրված կրթության որակի ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման և այլ հրատապ հիմնախնդիրների:


2.1.3. ՀՊՏՀ աշխարակիցների հետազոտությունների արդյունքների հրապարակումներ

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա հրատարակվել են 2 դասագիրք, 13 ուսումնական ձեռնարկ, 42 մենագրություն, 3 գիրք, 4 դասախոսությունների նյութեր, 536 գիտական հոդված, 20 ուսումնամեթոդական աշխատանք: Հոդվածներից 97-ը լույս է տեսել արտասահմանյան պարբերականներում (հավելված 2.6):

Գիտական ամսագրերում 2014 թվականին, 2011 թվականի համեմատությամբ, 1.5 անգամ ավելացել է համալսարանի գիտնական մանկավարժների, ասպիրանտների ու մագիստրանտների հրապարակումների թիվը: Միևնույն ժամանակ, շուրջ 2.6 անգամ ավելացել է հրապարակումների քանակը միջազգային ամսագրերում:



Դրանց շուրջ 50%-ը բաժին է ընկել 6 ամբիոնի (կառավարման՝ 12.3%, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման՝ 9.3%, միջազգային տնտեսական հարաբերությունների՝ 8.2%, բանկային գործի և ապահովագրության՝ 7.1%, տնտեսագիտության տեսության՝ 6.1%, տնտեսամաթեմատիկական մեթոդների՝ 5.8%):



Գծապատկեր 2.1. Հրատարակված գիտական հոդվածներն ըստ մեծ տեսակարար կշիռ ունեցող ամբիոնների

Ի հավելումն վերոնշյալի՝ 2014 թվականին հրատարակվել է 42 մենագրություն (2013 թվականին՝ ընդամենը 4): Ցավոք, նույնը չենք կարող արձանագրել գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակման առումով. 2013 թվականի համեմատությամբ դրանց թիվը նվազել է 29-ով:



2.2. Ուսանողների գիտահետազոտական գործունեությունը

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքը ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղկացուցիչն է, որն իրականացվում է ֆակուլտետներում, ամբիոններում, հետազոտական կենտրոնում անհատական և ավարտական աշխատանք գրելիս, արտադրական փորձառություն անցնելիս, ուսանողական գիտական ընկերության նստաշրջաններին և դրամաշնորհների շրջանակներում հետազոտություններին մասնակցելիս:

2014 թվականի մարտին կազմակերպվել է համալսարանի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) 36-րդ նստաշրջանի առաջին՝ փուլը, որին մասնակցել է բակալավրիատի 150 ուսանող (նախորդ տարի՝ 78): Նրանցից 70-ը անցել են երկրորդ՝ համալսարանական փուլ: Երկրորդ փուլին մասնակցելու է նաև 35 մագիստրանտ (նախորդ տարի՝ 26): Մասնակիցների թվի աճը հիմնականում պայմանավորված է ֆակուլտետային ՈՒԳԸ նախագահների ակտիվ աշխատանքով, վերջիններիս և ամբիոնների համագործակցության մեծացմամբ, ուսանողների շահադրաման մեխանիզմների բարելավմամբ և ՈՒԳԸ նստաշրջանների կազմակերպման բարձր մակարդակով:

Համալսարանի ուսանողները մասնակցել են նաև այլ բուհերի կազմակերպած գիտաժողովների, կյոթ սեղանների, բանավեճերի և մրցույթների:

Հոկտեմբերի 31-ին Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմակերպված միջհամալսարանական բանավեճերի մրցույթում հաղթող է ճանաչվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի թիմը:

Նոյեմբերի 14-15-ը Ծաղկաձորում տեղի է ունեցել ՀՊՃՀ ուսանողական գիտական ընկերության «BEEngineer» խորագրով միջբուհական ուսանողական գիտական կոնֆերանսը, որը նվիրված էր բուհի ուսանողական խորհրդի հիմնադրման 20-ամյակին: Միջբուհական կոնֆերանսին ՀՊՏՀ-ն ներկայացրել են կառավարման ֆակուլտետի ուսանող Զավեն Խուկեյանը ու հաշվապահական



հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ուսանող Դավիթ Պետրոսյանը: Նրանց՝ «Կրթությունը որպես ՀՀ տնտեսության զարգացման գրավական» խորագրված զեկուցումը ճանաչվել է «Լավագույն աշխատանք» և արժանացել համապատասխան պատվոգրի ու դրամական պարգևի:

Հաշվետու տարում շարունակվել են ուսանողներին և մագիստրանտներին գիտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ կատարվող քայլերը: Այս նախաձեռնությունները հաջողված ու հեռանկար ունեցող օրինակներ են՝ հիմք այդ գործընթացի ակտիվացման, նոր ձևաչափերի մշակման ու կիրառման համար:

Այսպիսով՝ թեպետ բոլոր ֆակուլտետներում գիտահետազոտական աշխատանքներում նկատվել է ուսանողների որոշակի ակտիվություն, այդուհանդերձ, ուսանողական գիտահետազոտական գործունեությունը դեռևս չի կարելի համարել բավարար: Միաժամանակ, հարկ է նշել, որ այդ բնագավառում առկա են որոշ հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում:

2.3. Գիտական գործունեության միջազգայնացումը

Համալսարանի գիտական գործունեության միջազգայնացման առումով կարևորվել է հետևյալը.

- հետազոտություններ արտասահմանյան համալսարաններում,
- միջազգային հրապարակումներ,
- մասնակցություն միջազգային գիտաժողովների, գիտական նստաշրջանների և միջազգային ամսագրերի խմբագրական խորհրդի նիստերի:

Համալսարանի աշխատակիցները 2014 թվականին մասնակցել են Շվեյցարիայում, Ավստրիայում, Մալայզիայում, Լեհաստանում, Իսպանիայում, Շվեդիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում, Վրաստանում անցկացված գիտաժողովների:

Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Վարդանյանը, տ.գ.դ., պրոֆեսորներ Միքայել Մելքումյանը, Վարդան Սարգսյանը և Աշոտ Թավադյանը հունվարի 15-18-ը Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ուսաս-



տանյան ակադեմիայում մասնակցել են «Ռուսաստանը և աշխարհը. կայուն զարգացում» խորագրով «Գայդարյան համաժողով-2014» միջազգային գիտաժողովին:

Գիտության բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ Խորեն Մխիթարյանը հունվարի 6-10 Կուալա Լումպուրում մասնակցել է տնտեսագիտության, սոցիալական գիտությունների և մենեջմենթի միջազգային կենտրոնի խմբագրական խորհրդի նիստերին:

Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Միքայել Մելքումյանը փետրվարի 12-14-ը Ժնևում զեկուցմամբ հանդես է եկել Եվրոպայի միացյալ ազգերի տնտեսական հանձնաժողովում:

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ատոմ Մարգարյանը մասնակցել է Բելառուսի ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից Մինսկում կազմակերպված՝ «Բելառուսի տնտեսության հետադարձաբերական զարգացման հանգուցային գործոնները և արդիական ուղղությունները» խորագրով միջազգային գիտական համաժողովին:

Ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Սարգսյանը մարտի 31-ից ապրիլի 3-ը Քիշնևում և հոկտեմբերի 7-10-ը Թբիլիսիում մասնակցել է Համաաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Կրթական հնարավորություններ, աջակցություն համալսարաններին ակադեմիական գերազանցության հասնելու գործում» խորագրով համաժողովին:

Լեզուների ամբիոնի վարիչ, Բ.գ.թ., դոցենտ Սուսաննա Չալաբյանը և ամբիոնի դասախոս Ժաննա Միդոյանը օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը Սլովակիայի Հանրապետության Կոշիցե քաղաքում մասնակցել են «Անզլերեն լեզվի դասավանդման ասոցիացիայի» 12-րդ գիտաժողովին:

Ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Սիլվա Սագրադյանը սեպտեմբերի 14-19 Լեհաստանի Կրակովի տնտեսագիտական համալսարանում առաջին անգամ ներկայացրել է մեր հանրապետությունը և հանդես է եկել «Ապրանքագիտությունը հետազոտական գործնական արդի ձեռքբերումներում և ապագա մարտահրավերներում» խորագրով



զեկուցմամբ ապրանքագիտության և տեխնոլոգիայի 19-րդ միջազգային գիտաժողովում:

2014 թ. հունվարին, Շվեյցարիայի համագործակցության և զարգացման գործակալության հետ համատեղ, մեկնարկել է «Դեպի Հայաստանի ներառական տնտեսություն» հետազոտական ծրագիրը:

Միջազգային գիտաժողովների են մասնակցել նաև համալսարանի մագիստրանտներն ու ասպիրանտները:

2.4. Բարձրագույն կրթության երրորդ աստիճանը (ասպիրանտուրա)

Համալսարանի հաջողությունները պայմանավորված են երիտասարդ հետազոտողների գիտական ներուժի զարգացմամբ, ինչին կոչված է բարձրագույն կրթության երրորդ աստիճանը՝ ասպիրանտուրան և դոկտորանտուրան:

2014 թ. դրությամբ համալսարանի ասպիրանտուրայում սովորում է առկա ուսուցման 29 (այդ թվում 1-ը՝ արտերկրից), հեռակա ուսուցման՝ 84 ասպիրանտ:

Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել առկա ուսուցման համակարգում 8, հեռակա ուսուցման համակարգում՝ 21 դիմորդ: 2014 թվականին առկա ուսուցման համակարգի 10 ասպիրանտ-շրջանավարտից 9 պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Հեռակա անվճար ուսուցման համակարգում սովորող ասպիրանտներից 25-ն ավարտել են (այդ թվում՝ 4-ը ազատվել են). ատենախոսություն են պաշտպանել 2-ը (հավելված 2.7):

Հաշվետու տարում տարբեր ամբիոններում ձևակերպվել է 4 հայցորդ (վճարովի հիմունքներով). հացորդի պարտականություններից ազատվել են 18-ը (հավելված 2.8):

2014 թվականին զգալի աշխատանք է կատարվել նաև ասպիրանտուրայի նախկին շրջանավարտների և հայցորդների հետ: 13 ասպիրանտ և հայցորդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Ասպիրանտուրայի արդյունավետությունը, ըստ ուսուցման համակարգերի՝ առկա, հեռակա, համապատասխանաբար՝ կազմել է



90.0% (նախորդ տարվա 88.9%-ի համեմատությամբ), 8.0% (նախորդ տարվա 16.7%-ի համեմատությամբ):

Համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 014 մասնագիտական խորհրդում 2014 թվականին կազմակերպվել է 37 ատենախոսության հրապարակային պաշտպանություն (հավելված 2.9):

Հաշվետու տարում ՀՀ ԲՈՀ-ը հաստատել է դոցենտի գիտական կոչում շնորհելու 13 որոշում: Ատենախոսության գիտական ղեկավար նշանակվելու թույլտվություն են ստացել 7 տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ:

Խնդիրներ

Թեպետ հաշվետու տարում գիտահետազոտական գործունեության բնագավառում արձանագրված ձեռքբերումներին, դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից են.

- պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվող դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և դասախոսությունների նյութերի սակավաթիվ լինելը,
- ասպիրանտուրայի և հատկապես դոկտորանտուրայի՝ երիտասարդ հետազոտողներով համալրման ոչ բարձր մակարդակը,
- ըստ ամբիոնների՝ գիտական հրապարակումների անհամաչափ բաշխվածությունը,
- գիտական սեմինարներին և կլոր սեղաններին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ոչ գործուն մասնակցությունը,
- հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցված չլինելը:

2014 թ. գիտական գործունեության զարգացմանն ուղղված նախաձեռնությունները պետք է խթան հանդիսանան առկա հիմնախնդիրների հաղթահարման համար:

2.5. Հրատարակչական գործունեությունը

2014 թվականին համալսարանի «Տնտեսագետ» հրատարակչությունը շարունակել է իրականացնել իր առաքելությունը՝ հրատա-



րակության նախապատրաստելով գիտաժողովների և ուսումնամեթոդական նյութեր: Հիմնական նպատակն է ՀՊՏՀ-ում կրթական, մեթոդական, գիտական, տեղեկագրական և այլ գրականության, պարբերականների հրատարակման կազմակերպումը՝ նպաստելով կրթական գործընթացի արդյունավետությանը:

Հաշվետու տարում խմբագրվել, էջադրվել, ձևավորվել և «Տնտեսագետ» հրատարակչության ինդեքսավորմամբ լույս են ընծայվել ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութերի ժողովածուն, 4 ուսումնական ձեռնարկ, 1 դասախոսություն, ներհամալսարանական գիտական դրամաշնորհային 12 հետազոտություն, «Ամբերդ» մատենաշարով՝ 17 կոլեկտիվ մենագրություն, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի 4 համար, «Տնտեսագետ» ամսագրի 5 համար՝ գունավոր ձևավորմամբ: Ձևավորվել և գունավոր տպիչով տպագրվել են պատվոգրեր, շնորհակալագրեր, հավաստագրեր, գիտաժողովների ծրագրեր, գիտաժողովների ծալագրեր:

«Տնտեսագետ» հրատարակչությունը համագործակցում է բուհի տարբեր ստորաբաժանումների հետ՝ կատարելով գունավոր տպագրության, ձևավորման, բազմացման աշխատանքներ (շնորհավորական ուղերձներ, պայմանագրեր, ոսկե հուշամեդալների, պատվավոր դոկտորի վկայականների ներդիրներ և այլն):

Ներկայումս ընթացքում են «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ» խորագրով ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի նյութերի խմբագրահրատարակչական աշխատանքները:

2014 թվականը «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդեսի համար հրեթյանական էր. լրացել է լույսընծայման 10-ամյակը: Կայացած պարբերականը այսօր ընթերցողին ներկայանում է նոր ձևավորմամբ ու կառուցվածքով՝ ձգտելով համահունչ դառնալ միջազգային չափանիշներին:

Փոխվել է հանդեսի խմբագրակազմը. գլխավոր խմբագրի պարտականությունները ստանձնել է ՀՊՏՀ ռեկտորը:

Հաշվետու տարում հանդեսը, պահպանելով իր պարբերականությունը, լույս է ընծայել 4 համար՝ ընդգրկելով մեծաթիվ հեղինակների ոչ միայն հանրապետության սահմաններից, այլև արտերկրից (Ռուսաստանի Դաշնություն, Մալայզիա, Իրանի Իսլամական Հանրապետություն, Ուկրաինա, Լեհաստան և այլն):



«Բանբերը» հաջողությամբ է կատարել իր առաքելությունը՝ մատուցելով հրատապ գիտական խոսք, նոր մոտեցումներ ու առաջարկություններ մեր երկրում առկա հիմնախնդիրների վերաբերյալ: Բազմաբնույթ ու արդիական խորագրերի ներքո տպագրվող նյութերը քննարկումների ու վերլուծությունների առիթ են դարձել: Այն յուրօրինակ հարթակ է երիտասարդ գիտնականների համար՝ կատարելու առաջին քայլերը տնտեսագիտության բնագավառում:

Շարունակում է ընդլայնվել «Բանբեր ՀՊՏՀ»-ի առաքման աշխարհագրությունը՝ ներառելով ինչպես ՀՀ, ԼՂՀ գիտական, ուսումնական հաստատություններ, այնպես էլ կառավարման ու գերատեսչական մարմիններ: Ուրախալի է, որ խմբագրությունը նոր խնդրանք-առաջարկներ է ստանում պարբերականի առաքման վերաբերյալ:

2.6. Գրադարանային սպասարկումը

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, գիտական հետազոտությունների աջակցության գործում էական դերակատարում ունի համալսարանի գրադարանը:

Գրադարանի հիմնական գործառույթներն են.

- գրքային ֆոնդի համալրում,
- գրքային ֆոնդի պահպանում,
- ընթերցողների սպասարկում (գրքային, մատենագիտական),
- պրոֆեսորադասախոսական կազմի և ստորաբաժանումների հետ համագործակցություն,
- ուսանողների հետ աշխատանքների իրականացում (միջոցառումների կազմակերպում, հանդիպումներ, գրադարանի և գրքի հետ ծանոթացում),
- այլ գրադարանների և կազմակերպությունների հետ համագործակցություն,
- աշխատակիցների մասնագիտական հմտությունների բարձրացում:

2014 թվականի ընթացքում գրադարանը համալրվել է 1966 միավոր (153 անուն) գրականությամբ (բաժանորդագրության, գնման, ինչպես նաև նվիրատվությունների միջոցով)՝ հայերեն



(1582), ռուսերեն (220 անուն) և այլ լեզուներով (164 անուն): Գրքային ամբողջ ֆոնդը 185540 է (հայերեն՝ 55367, այլ լեզուներով՝ 128713, ատենախոսություններ՝ 699): Գրադարանը 2014 թ. բաժանորդագրությամբ ստացել է 21 անուն թերթ և ամսագիր՝ հայերեն և ռուսերեն. տարբեր կազմակերպություններից ստացվել են նաև անվճար օրինակներ:

Հաշվետու տարում գրադարանի ընթերցող է դարձել 898 ուսանող. շարունակվում է հեռակա ուսուցման համակարգի ուսանողների գրանցումը: Ընթերցողների ընդհանուր թիվը 7898 է:

Գրադարանը շարունակել է համալսարանի պաշտոնական կայքի «Գրադարան» բաժնի նորացման գործընթացը, բացվել են նոր խորագրեր՝ «Թվային գրադարաններ», «Կազմակերպություններ, ասոցիացիաներ», «Բառարաններ, հանրագիտարաններ»: Ընթացքում է «Տնտեսագետների պատկերասրահ» բազայի ստեղծման աշխատանքը:

Շարունակվում է գրադարանային ֆոնդի թվայնացումը KOHA-ON-LINE ծրագրով, որը հնարավորություն է ընձեռում բարձրացնելու սպասարկման որակը, մեծացնելու սահմանափակ քանակով գրականության հասանելիությունը, կապ ստեղծելու այլ գրադարանային ցանցերի հետ: Էլեկտրոնային քարտարան են մուտքագրվել 624 գիրք, 375 սեղմագիր, 2007-2014 թթ. ատենախոսությունները: Թվայնացված է 135 գիրք: Ավարտվել են ուսանողական ընթերցասրահի գրքային ֆոնդի մուտքագրման աշխատանքները:

Հաշվետու տարում գրադարանի ֆոնդից դուրս է գրվել 4838 միավոր ժամանակավրեպ գրականություն՝ պահպանելով գրքերի համապատասխան օրինակները:





3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի միջազգային գործունեությունը հիմնած ՀՊՏՀ 2012-2016 թթ. ռազմավարական զարգացման ծրագրի վրա, նպատակաուղղված է համաշխարհային կրթական և գիտական տարածությանն ինտեգրվելուն, կրթական և գիտական ծառայությունների շուկայում մրցունակության բարձրացմանը, կրթության որակի ճանաչմանը, որակավորումների համադրելիության և մրցունակության ապահովմանը: Միջազգայնացումը կարևորագույն գործոն է նաև համաշխարհային կրթական զարգացումներին իրազեկ լինելու և լավագույն փորձը կիրառելու առումներով:

3.1. Արտասահմանյան գործընկերների հետ համալսարանի կրթական, գիտական, մշակութային կապերի զարգացումը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը համագործակցում է արտերկրի մոտ երեք տասնյակ համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ՝ բակալավրիատի, մագիստրատուրայի ուսանողների կրթությունն այդ բուհերում շարունակելու, դասախոսների վերապատրաստման և այլ ուղղություններով:

Միջազգային համագործակցության բնագավառում կարևոր իրադարձություն էր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և «Globe Education (GB) LTD» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցի հիմնադրումը: «Globe Education (GB) LTD»-ի գործընկերները 4 բրիտանական բուհեր են, որոնցից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ համագործակցում է Անգլիա Ռասկին համալսարանը: Համատեղ բիզնես դպրոցը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2013 թ. դեկտեմբերի 5-ի 1348-Ա որոշմամբ, համաձայն որի՝ համատեղ բիզնես դպրոցի բաժնեմասի 51 տոկոսը տնօրինում է «Globe Education (GB) LTD»-ն, 44 տոկոսը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, իսկ 5 տոկոսը՝ ՀՀ կառավարությունը:



Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցն առաջարկում է հեռակա մագիստրոսական ծրագիր, որը հնարավորություն է տալիս համատեղելու ուսումը և աշխատանքը: Ծրագրի տևողությունը 18 ամիս է: Դասընթացները կազմակերպվելու են յուրաքանչյուր վեցից ութ շաբաթը մեկ՝ ուրբաթ օրերին, ժամը 18:00-ից 20:00-ն, շաբաթ և կիրակի օրերին՝ 9:00-ից 17:30-ը: Դասընթացը հաջողությամբ ավարտած ուսանողները կստանան բրիտանական պետական միջազգային ճանաչում ունեցող Անգլիա Ռասկին համալսարանի մագիստրոսի դիպլոմ:

Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցի ուսանողները բացառիկ հնարավորություն ունեն ուսումնառության ընթացքում, նույն ուսման վարձի շրջանակներում, երկու մոդուլի մասնակցելու Լոնդոնի Կոմերցիայի դպրոցի այլ մասնաճյուղերում, այդ թվում՝ Լոնդոնում, Մայթայում և այլուր:

Դասավանդումն իրականացվում է Մեծ Բրիտանիայից ժամանած դասախոսների կողմից՝ տեղացի բարձր որակավորում ունեցող մասնագետների հետ համագործակցությամբ:

Համագործակցության շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը «Globe Education (GB) LTD»-ին անհատույց օգտագործման է տրամադրել 275 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածք:

«Globe Education (GB) LTD»-ն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին նվիրատվության կարգով տրամադրել է 54 անուն գիրք, ընդհանուր՝ 175 միավոր, որի ընդհանուր արժեքը 7102.86 \$-ով ստերլինգ է (4.687.237,37 ՀՀ դրամ՝ հաշվարկված 10.11.2014 թ. դրությամբ):

2014 թվականի նոյեմբերի 7-9 անցկացվել է Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցի առաջին մոդուլը, որում ընգրկվել է 13 ուսանող: Դասընթացը «Մարքեթինգի կառավարումն» էր: Երկրորդ մոդուլը նախատեսվում է անցկացնել 2014 թվականի դեկտեմբերի 19-21-ն ընկած ժամանակահատվածում:

2014 թվականի մայիսի 23-ին ռեկտոր Կորյուն Աթոյանի մասնակցությամբ Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի (РНИХ) հիմնադիր ժողովում ստորագրվել է պայմանագիր,



որով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը դարձել է «Տնտեսագիտական համալսարանների եվրասիական ասոցիացիայի» անդամ:

Սեպտեմբերի 18-ին ռեկտոր Կորյուն Աթոյանը հյուրընկալել է Դուբայի համալսարանի նախագահ Էսա Բաստակիին: Այժմ բանակցություններ են վարվում հետագա համագործակցության ուղղությամբ:

2014 թվականի ապրիլի 15-ին համագործակցության պայմանագիր է ստորագրվել Հայաստանի պետական տնտեսագիտական և Արցախի պետական համալսարանների միջև:

Հաշվետու տարում համագործակցության պայմանագրեր են ստորագրվել նաև ՀՊՏՀ-ի և ՌԴ նախագահին առընթեր Ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ռուսաստանյան ակադեմիայի, Տյումենի պետական ճարտարապետաշինարարական, Ճապոնիայի Ռեցումեյկան Ասիա Պասիֆիկ համալսարանների միջև:

3.2. Կրթական ծառայությունների արտահանումը

Արդեն երրորդ տարին է, որ համալսարանը քայլեր է ձեռնարկում կրթական ծառայությունների միջազգային շուկա ներթափանցելու ուղղությամբ:


2013-2014 ուսումնական տարում համալսարանի նախապատրաստական բաժինն ավարտել է Հնդկաստանի 7 քաղաքացի: Մագիստրատուրա է ընդունվել Սիրիայի Արաբական Հանրապետության 3 քաղաքացի, որոնց դասընթացը կազմակերպվում է անգլերենով: 2013 թվականին Հայաստանի պետական տնտեսագիտական և Բրատիսլավայի տնտեսագիտական համալսարանների միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ՀՊՏՀ-ում ուսումնառում է Բրատիսլավայի համալսարանի մեկ ուսանող:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության, մշակույթի բնագավառներում համագործակցության ծրագրի» շրջանակներում ՀՊՏՀ-ում հյուրընկալվել է Հունաստանի Իո-



նի համալսարանի ասպիրանտ Յուֆանտիս Վասիլետոսը, ով «Ամբերդ» հետազոտական կենտրոնում 2014 թվականի հունիսի 9-18-ը գիտական աշխատանք է կատարել տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Վարդան Սարգսյանի ղեկավարությամբ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանում են նաև օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր ազգությամբ հայ են:



Գծապատկեր 2.2. Օտարերկրյա քաղաքացիների թիվը

3.3. Ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը

Ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը համալսարանում դեռևս բավարար մակարդակի վրա չէ: Ակադեմիական փոխանակումները չեն համապատասխանում համալսարանի միջազգայնացման պահանջներին:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից Գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրին (DAAD) մասնակցության համար 2013 թվականին դիմել է 8 ուսանող. մեկին տրամադրվել է կրթաթոշակ, իսկ 2014 թվականին նա մեկնել է Գերմանիա՝ ուսումը շարունակելու այնտեղ: 2015 թվականին



ուսումը շարունակելու համար 2014 թվականին դիմել է համալսարանի 30 մագիստրանտ. 3-ին տրամադրվել է կրթաթոշակ:

Global UGRAD ծրագրի շրջանակներում 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ԱՄՆ է մեկնել մեկ ուսանող:

Լոնդոնի Կոմերցիայի դպրոցի մագիստրոսական ծրագրում 2014-2015 ուստարում ընդգրկվել է 4 ուսանող:

2014 թվականին տարբեր միջազգային գիտաժողովների է մասնակցել 19 դասախոս:

Խնդիրներ

Համալսարանի միջազգային գործունեության բնագավառում առկա խնդիրներն են.

- ակադեմիական փոխանակումները չեն բավարարում միջազգայնացման պահանջները,
- սովորողների ընդհանուր թվում փոքր է օտարերկրյա ուսանողների (լրիվ ծրագրով սովորող) բաժնեմասը,
- արտերկրից չեն հրավիրվել կրթական ծրագրեր և հետազոտություններ իրականացնող գիտնականներ, դասախոսներ,
- մեծ չէ արտասահմանյան բուհեր գործուղվող և փոխանակությամբ ընդունվող ուսանողների, դասավանդման և հետազոտությունների համար այլ երկրներ մեկնող գիտնականների, դասախոսների թիվը,
- համալսարանը ներկայացված չէ միջազգային ակադեմիական աստիճանակարգերում,
- չեն իրականացվում համատեղ մագիստրոսական, դոկտորական ծրագրեր,
- սակավաթիվ են արտասահմանյան համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ իրականացվող համատեղ հետազոտությունները և արտասահմանցի գործընկերների հետ համահեղինակային հրապարակումները:

Համալսարանի միջազգային գործունեության զարգացմանը և միջազգայնացման գործընթացների արագացմանը խոչընդոտող նշված և բազմաթիվ այլ խնդիրների լուծման համար պահանջվում են մեծ ջանքեր: Այս առումով նախատեսվել են մի շարք միջոցառումներ:





4. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Համալսարանի տեղեկատվական քաղաքականությունը, հասարակայնության հետ կապերի ամրապնդումը, համալսարանական կյանքի լուսաբանումը թե՛ հանրության լայն շերտերի, թե՛ հիմնական շահառուների համար մեծ թափ է ստացել 2014 թվականին՝ այդպիսով ապահովելով ՀՊՏՀ հաշվետվողականությունը: Համալսարանի պաշտոնական կայքի, ՀՊՏՀ ֆեյսբուքյան պաշտոնական էջի սպասարկումը, բուհի պաշտոնական «Տնտեսագետ» ամսագրի հրատարակումը և զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցությունը արձանագրել են նոր արդյունքներ:

2014 թվականին համալսարանի պաշտոնական կայքը հարստացվել է նոր տեղեկատվությամբ՝ ընդարձակելով իր լսարանը: Կայքը հետևողականորեն և օպերատիվ ձևով հանրությանն է ներկայացրել համալսարանական կյանքի անցուդարձը, կառավարման մարմինների՝ խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումներն ու օրակարգերը, համակողմանիորեն ներկայացրել է ՀՊՏՀ ընդունելության ամբողջ գործընթացը, դասացուցակները, հրապարակել է գիտաժողովների ժողովածուների, ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցի, «Ամբերդ» մատենաշարի, ՀՊՏՀ 2012-2013 թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհների արդյունքում տպագրված հրատարակությունների, «Տնտեսագետ» ամսագրի, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակները, համալսարանական հաշվետվությունները, թարմացրել է ամբիոնների աշխատակազմերը: Կայքում բացվել են նոր խորագրեր՝ «Ռեկտորի հարցազրույցները», «Ռեկտորի լուսանկարները», «Հաճախ տրվող հարցեր», «Գիտաուսումնական խմբեր», «Պատկերասրահ», «ՀՊՏՀ պաշտոնական ալիքը Youtube-ում», «Նախագծեր», «Տեսադարան», բազմաթիվ նոր խորագրեր «Էլեկտրոնային գրադարանի», «Ամբերդի» և այլ էջերում: Կայքում ներկայացվել են ՀՊՏՀ թանգարանը, «Տնտեսագետ» ուսանողի տունը: Ամենօրյա ընթացակարգով ներկայացվել են համալսարանի անցուդարձին ու հաջողություններին վերաբերող նորություններ ու հայտարարություններ:



Շարունակական ու հետևողական աշխատանքի շնորհիվ համալսարանի պաշտոնական կայքն աննախադեպ արդյունք է գրանցել. այսպես՝ ըստ «Գուգլ Անալիտիկս» վարկանշային կայքի՝ համալսարանի պաշտոնական կայքը 2014 թ. ունեցել է շուրջ 430 հազար այցելու՝ 2013 թ. 240 հազարի փոխարեն, որոնք, ընդհանուր առմամբ, կարդացել են 1 մլն 400 էջ նյութ:

Համալսարանն իր տեղեկատվական քաղաքականությունն իրականացրել է նաև Facebook-ում համալսարանի պաշտոնական էջի միջոցով: Ֆեյսբուքյան էջի լսարանը 2014 թ. ևս ընդարձակվել է. այստեղ էջի «հավանողների» թիվը հասել է շուրջ 14 հազարի՝ 2013 թ. 8 հազարի փոխարեն:

Հասարակայնության տարբեր շերտերի և ուսանողության հետ կապի կարևոր միջոց է նաև համալսարանի պաշտոնական՝ «Տնտեսագետ» ամսագիրը: 2014 թվականի ընթացքում լույս է ընծայվել «Տնտեսագետ» երկամսյա ամսագրի 5 համար, որն անվճար տարածվել է համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական կազմերի և ուսանողների շրջանում, մի շարք կառույցներ և գերատեսչություններ: Ամսագրի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է կայքում՝ հասանելի դառնալով ավելի լայն զանգվածների: Խմբագրակազմը շարունակել է աշխատել իր որդեգրած կրթադաստիարակչական սկզբունքներով՝ ստեղծել գիտամշակութային, լրատվական հանդես՝ արձարժեքով համալսարանի բազմաբնույթ առօրյան, ամսագրի միջոցով վավերացնելով համալսարանի տարեգրությունը, հարթակ ծառայելով ՀՊՏՀ գիտնականների, ստեղծագործող մարդկանց համար: Հիմնական խորագրերը՝ «Վերածանելով արվեստի գաղտնագրերը», «Հայրենիքը սկսվում է բնությունից», «Մեր շնորհալիները», «Համաշխարհային բրենդ», «Տնտեսական խճանկար», «Փորձագիտական հարթակ», այս ընթացքում գտել են իրենց ընթերցողին ու շարունակում են պահանջված լինել: Ամսագրի համար կարևոր է հատկապես իր երիտասարդ ընթերցողների կարծիքն ու պահանջը, ուստի ժամանակ առ ժամանակ կազմակերպում են լսարանային հարցումներ և, իհարկե, հարթակ տրամադրում ստեղծագործող ուսանողներին:

Համալսարանն ակտիվ համագործակցել է նաև զանգվածային լրատվամիջոցների հետ՝ ապահովելով համալսարանի բոլոր նշա-



նակալի իրադարձությունների լուսաբանում: ՁԼՄ-ների կողմից ՀՊՏՀ լուսաբանումները անցնում են 200-ի շեմը, դրանց մեծ մասի հղումները ներկայացված են կայքի «ՁԼՄ-ները ՀՊՏՀ-ի մասին» խորագրի ներքո: Համալսարանական կյանքի, բարեփոխումների, իրադարձությունների մասին հանրության առջև ակտիվորեն հանդես է եկել բուհի ռեկտոր Կորյուն Աթոյանը՝ մասնակցելով տարբեր հաղորդաշարերի, հարցազրույցների տալով հեռուստաընկերությունների, թերթերի, ամսագրերի և կայքերի: Ռեկտորի հարցազրույցները հրատարակված են կայքի «Ռեկտորի հարցազրույցները» խորագրի ներքո: Կայքում նոր գործարկված «ՀՊՏՀ պաշտոնական այլըրը Youtube-ում» խորագրի ներքո տասնյակ տեսանյութեր ու հեռուստառեպորտաժներ են ներկայացված համալսարանի մասին: Պատրաստվել է ռեկտոր Կորյուն Աթոյանի պաշտոնավարման 3 տարիների խոշոր ծրագրերի լուսանկարային ցուցադրության շարքը:

«Ամբերդ» կենտրոնի հետ համատեղ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը պատրաստել է կենտրոնի երկու տարվա հաշվետվությունը ներկայացնող գիրքը:

Նորացվել և ձևավորվել է համալսարանի նորակառույց թանգարանը: Թանգարանը նորովի ձևավորելու համար ձեռք են բերվել լուսանկարների շրջանակներ, տպագրվել են շուրջ 30 լուսանկարներ: Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակիցը մասնակցել է ԻԿՕՄ-ի (International Council of Museums (ICOM)) հայկական թանգարանների ազգային կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպված «Հանրահռչակումը բուհական և ակադեմիական թանգարաններում» խորագրով եռօրյա աշխատաժողովին:





**5. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Համալսարանի ռեկտորատի, դեկանատների, ամբիոնների, ուսանողական խորհրդի, «Տնտեսագետ» ամսագրի գործունեության հիմքում ուսանողության ուսումնադաստիարակչական խնդիրներն են:

Անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը շարունակել է համախմբել հասարակական ակտիվություն դրսևորող ուսանողներին: Կազմակերպվել են օլիմպիադաներ, տնտեսագիտական ուսանողական գիտաժողովներ, մարզական և մշակութային միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր, «Ոսկե աշուն», «Ուսանողական գարուն» ավանդական դարձած մրցույթ-փառատոնները, բանավեճեր, բաց դասեր, այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր և թանգարաններ: Ուսանողներն ակտիվորեն մասնակցել են նաև հայրենասիրական ծրագրերին. ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների հետ պարբերաբար այցելություններ են կատարել տարբեր զորամասեր, սահմանային գոտիներ:

Սեպտեմբերի 12-ին համալսարանի հյուրն էր ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ով մասնակցեց ՀՊՏՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված լսարանի բացման հանդիսավոր արարողությանը: Լսարանի բացմանը բարձրաստիճան պաշտոնյաներից բացի ներկա էին նաև զոհված ուսանող-ազատամարտիկների ընտանիքների անդամները, հարազատները, ուսանողական ու մարտական ընկերները: Ուսանողական խորհրդի 20-ամյա հոբելյանի շրջանակներում իրականացվող այս միջոցառումը կազմակերպվել էր ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ:

Ուսանողական խորհուրդը պարբերաբար իրագործել է նաև սոցիալական ծրագրեր՝ այցելություններ մանկատներ, ծերանոցներ և այլն: Չեն անտեսվել նաև կարիքավոր ուսանողների խնդիրները: Համալսարանի 110 ուսանողներ (այդ թվում 7-ը՝ Եղեգնաձորի, 14-ը՝



Գյումրու մասնաճյուղերի ուսանողներ) արժանացել են Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (ՀԵՀ) կրթաթոշակին: Մարտի 19-ին համալսարանի հանդիսասրահում կայացել է ՀԵՀ-ի կողմից I կուրսերի անվճար համակարգում չընդգրկված և կրթաթոշակի արժանացած ուսանողների հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը:

Ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև կրթական համակարգին վերաբերող աշխատանքներին, ուսանողությամբ հետաքրքրող հարցերի շուրջ իրականացրել են սոցիոլոգիական հարցումներ:

Սույն թվականի փետրվարի 21-ին Երևանի պետական կամերային թատրոնում տեղի ունեցած Հայկյան մրցանակաբաշխության ժամանակ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհուրդը երրորդ տարին անընդմեջ արժանացել է «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգին:

Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացած ՌԻՀԱ «Գարնանային գավաթ» մրցույթ-փառատոնում երկրորդ տարին անընդմեջ ՀՊՏՀ «Нар-Хоз» թիմը տոնել է փառավոր հաղթանակ՝ առաջին պատվավոր հորիզոնականը կիսելով ԵՃՇՊՀ «Տղամարդիկ» թիմի հետ:

Սույն թվականի նոյեմբերի 13-14-ը Երևանի պետական համալսարանի շքասրահում տեղի է ունեցել «Հայացք ապագային» երիտասարդական-ուսանողական ամենամյա ցուցահանդես-համաժողովը, որին մասնակցել են 60-ից ավելի երիտասարդական և ուսանողական կազմակերպություններ: Իր հերթական յուրօրինակ մասնակցությունն է ցուցաբերել նաև բուհի ուսանողական խորհուրդը: Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը կատարել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի աշխատանքներին: Մասնավորապես՝ հոկտեմբերի 11-ին մասնակցել է Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի և Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կողմից կազմակերպված «ՀԱՋՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ – Ուսանող-



ների մասնակցության մոդելները բուհերի կառավարման համակարգում» միջբուհական ուսանողական աշխատաժողովին:

Համալսարանում ակտիվացել են նաև մարզական աշխատանքները և համալսարանի թիմերի մասնակցությունը տարբեր մրցումներին և մարզական խաղերին:

Համալսարանի առանձին մարզաձևերի հավաքական թիմերը լավ են հանդես եկել հանրապետական տարբեր մրցումներում և ուսանողական մարզական խաղերում: Աչքի են ընկել հրաձիգները, սեղանի թենիսիստները, ֆուտբոլիստները և շախմատիստները, որոնք դարձել են չեմպիոններ և մրցանակակիրներ՝ արժանանալով նաև համալսարանի ռեկտորատի խրախուսանքին և դրամական պարգևներին:

2014 թվականին համալսարանի ֆուտզալի տղաների հավաքականը մասնակցել է Հոլանդիայի Ռոտտերդամ քաղաքում կայացած համաեվրոպական համալսարանական մարզական խաղերին: Հաշվետու տարում ֆուտզալի տղաների հավաքականը դարձել է միջբուհական առաջնության չեմպիոն:

Համալսարանում կազմակերպված «Ջարթոնք» մարզական համալիրին մասնակցել են I-II կուրսերի բոլոր ուսանող-ուսանողուհիները: Նրանցից 60-ը հաջողությամբ հանձնել են համալիրը և պարգևատրվել պատվոգրերով և կրծքանշաններով: Ոգևորությամբ է անցկացվել նաև «Ռեկորդի օր» մարզական միջոցառումը, որին մասնակցել են շուրջ 60 ուսանող-ուսանողուհիներ՝ գրանցելով մարզական բարձր արդյունքներ. պարգևատրվել են պատվոգրերով, կրծքանշաններով և գավաթներով:

Ակտիվ աշխատանքներ են կատարվել ուսանողների շրջանում սպորտը քարոզելու ուղղությամբ. պատրաստվել են ցուցավահանակներ, որտեղ ներկայացվել են համալսարանի տարվա 10 լավագույն մարզիկ-մարզուհիները, ռեկորդակիրները, լուսաբանվել է մարզական առօրյան:

Համալսարանի ուսանողներն ակտիվորեն մասնակցել են նաև Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կազմակերպած մարզական-զանգվածային միջոցառումներին՝ օլիմպիական օրվան նվիրված վազքարշավին: Նրանցից մեկը հաղթող է ճանաչվել, մյուսը զբաղեցրել է մրցանակային երկրորդ տեղ. երկուսն էլ արժանացել են ՀՍՊՀ-ի սահմանած դրամական պարգևի:



Մարզական կյանքը բուռն է եղել նաև Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում, որտեղ, բացի տուրիստական արշավներից և էքսկուրսիաներից, յուրաքանչյուր հերթափոխում կազմակերպվել և անցկացվել են սպարտակիստներ, մարզական և մշակութային միջոցառումներ:



6. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում համալսարանի բոլոր մասնաշենքերում կատարվել են հիմնական և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

«Համաշխարհային բանկի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամի հետ» կնքված պայմանագրի համաձայն՝ բոլոր մասնաշենքերում փայտե պատուհանները, պատուհանագոգերը և դռները փոխարինվել են մետաղապլաստե պատուհաններով, պատուհանագոգերով և դռներով:

Կառավարման ֆակուլտետի մասնաշենքում վերափոխվել և վերանորոգվել է կենտրոնական մասնաշենքի մուտքի աստիճանավանդակի և հարթակի բազալտե սալիկները, նորացվել են բետոնե հիմքերը, փոխարինվել են մուտքի փայտե դռները, գրանիտապատվել ու սալապատվել են շքասրահի և առաջին հարկի հատակներն ու աստիճանները, վերանորոգվել են շքասրահն ու առաջին հարկի միջանցքները, մի քանի աշխատասենյակներ: Շքասրահում տեղադրվել են ապակե դռներով 4 պահարաններ թանգարանային իրերի համար: Վերանայվել և ամբողջությամբ թարմացվել է ջերմամատակարարման ներքին համակարգը: Բազմաթիվ աշխատասենյակներում տեղադրվել են օդորակիչներ:

Ֆինանսական ֆակուլտետի մասնաշենքում սալապատվել են մուտքի աստիճանները, աստիճանահարթակն ու առաջին հարկի հատակը, վերանորոգվել են առաջին հարկի միջանցքը, որոշ լսարաններ ու աշխատասենյակներ, հիմնանորոգվել են II մասնաշենքը III մասնաշենքին միացնող կամուրջը, սանհանգույցները, ներդրվել է օդափոխության նոր համակարգ:

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի մասնաշենքում վերանորոգվել են



բոլոր լսարաններն ու աշխատասենյակները, բոլոր հարկերի սանհանգույցներն ու ջեռուցման ներքին համակարգը, սալապատվել են բոլոր հարկերի հատակները, աստիճաններն ու աստիճանահարթակները: Մասնակիորեն վերանորոգվել են վերելակները:

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի մասնաշենքում վերանորոգվել են մի շարք լսարաններ ու աշխատասենյակներ, ջերմամատակարարման ներքին ցանցը: Սալապատվել ու վերանորոգվել է կաթսայատունը:

Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի մասնաշենքում վերանորոգվել են խմելու ջրագիծը, արտաքին և ներքին ջեռուցման ցանցը, կաթսայատունը, տեղադրվել են ժամանակակից նոր կաթսաներ:

5-րդ մասնաշենքի նախկին համակարգչային սրահը վերակառուցվել է, կահավորվել համապատասխան կահույքով ու սարքավորումներով և հատկացվել Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցին: Վերանորոգվել են երկրորդ հարկի սանհանգույցները: Գրապահոցում տեղադրվել են շարժական հզոր օդորակիչներ:

Վերանորոգվել են «Տնտեսագետ» ուսանողի տան երկրորդ հարկի վթարված ջրամատակարարման հանգույցները, վերագործարկվել է ջեռուցման համակարգը:

Վերանորոգման աշխատանքներ են կատարվել նաև Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանի մասնաշենքերում: Նորոգվել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, տարածքից մասնաշենքեր մտնող լուսավորության համակարգը: Մասնակիորեն վերանորոգվել են բոլոր տնակները, քոթեջները, սանհանգույցները, բաղնիքները, թենիսի փակ դաշտը, խոհանոցը և բացօթյա ճաշարանը:

Եղեգնաձորի մասնաճյուղում վերակառուցվել են մի քանի լսարաններ և աշխատասենյակներ՝ հարմարեցնելով ժամանակակից պահանջներին: Ձեռք են բերվել էլեկտրական և այլ անհրաժեշտ գործիքներ:

Համալսարանի բոլոր մուտքերի մոտ տեղադրվել են տուրնիկետներ: Վերանորոգվել և լաքապատվել են բոլոր նստարանները, տեղադրվել են դեկորատիվ ծառեր ու խոտածածկ: Նորացվել են ներքին և արտաքին ցուցանակները, դրոշները:



Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի գործունեությունը նպատակաուղղված է համալսարանի համակարգիչների, համակարգչային լաբորատոր սրահների, սերվերների, համակարգչային սարքավորումների, տեղային և համացանցի, ուսումնատեխնիկական միջոցների, թեստային քննական համակարգի սպասարկմանը, արդիականացմանն ու վերագինմանը:

Հաշվետու տարում համալսարանը համալրվել է 5 նոր աշխատանքային համակարգիչներով, 3 տպիչով, 1 գերիզոր սերվերով, Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցի Wi-Fi գոտով: Համացանցի ելքի թողունակությունը 10 Մբ/վ-ից հասել է մինչև 30 Մբ/վ-ի: Ներկայում ուսումնական գործընթացի, գիտական հետազոտությունների և կազմակերպական աշխատանքների համար բուհում օգտագործվում է շուրջ 700 միավոր համակարգչային տեխնիկա:

7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

7.1. Գյումրու մասնաճյուղ

Առկա ուսուցման բակալավրիատը կազմակերպվում է 5 մասնագիտությամբ՝ «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», «Կառավարում», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Կոմերցիա»:

Հեռակա ուսուցման բակալավրիատը կազմակերպվում է 1 մասնագիտությամբ՝ «Ֆինանսներ»:

Առկա ուսուցման մագիստրատուրան կազմակերպվում է 3 մասնագիտությամբ՝ «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», «Միջազգային տնտեսական հարաբերություններ»:

Հեռակա ուսուցման մագիստրատուրան կազմակերպվում է 2 մասնագիտությամբ՝ «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)»:



2013-2014 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում մասնա-
ճյուղում սովորել է 663 ուսանող, այդ թվում՝

- 1) առկա ուսուցման բակալավրիատ՝ 439,
- 2) առկա ուսուցման մագիստրատուրա՝ 144,
- 3) հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 40,
- 4) հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 40:

2014-2015 ուստարվա առաջին կիսամյակում մասնաճյուղում սո-
վորում է 693 ուսանող, այդ թվում՝

- 1) առկա ուսուցման բակալավրիատ՝ 411,
- 2) առկա ուսուցման մագիստրատուրա՝ 142,
- 3) հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 69,
- 4) հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 71:

2014 թվականին առկա ուսուցման բակալավրիատը թողարկել է
136, իսկ առկա ուսուցման մագիստրատուրան՝ 73 շրջանավարտ,
որոնցից 7-ը ստացել են գերազանցության դիպլոմ:

2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջադիմությունը
քննաշրջանից հետո առկա ուսուցման բակալավրիատում 74% է,
հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 61%, առկա ուսուցման մա-
գիստրատուրայում՝ 82%, հեռակա ուսուցման մագիստրատուրա-
յում՝ 69%: 5 ուսանող հեռացվել է ուսման ցածր առաջադիմության
պատճառով:

2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի միջան-
կյալ քննաշրջանից հետո ուսման առաջադիմությունը 67% է:

Մասնաճյուղում գործում են ընդհանուր տնտեսագիտության և
բնագիտական առարկաների ամբիոնները:

Մասնաճյուղում դասավանդում է 47 դասախոս, որոնցից 5-ը գի-
տության դոկտոր, պրոֆեսոր են, 12-ը գիտության թեկնածու, դո-
ցենտ, 9 գիտության թեկնածու:

Հաշվետու տարում մասնաճյուղի 40 դասախոսներ մասնակցել
են հանրապետական տարբեր գիտաժողովների և սեմինարների,
որոնց շրջանակներում հրատարակել են 10 գիտական հոդված և 3
մեթոդական ձեռնարկ: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի
պրոֆեսորադասախոսական կազմը հրատարակել է 32 գիտական
հոդված: Ամբիոնի գիտահետազոտական՝ «Համաշխարհային
տնտեսության փոփոխման միտումները» թեմայի շրջանակներում
հրատարակվել են 15 գիտական հոդվածներ և զեկուցումներ:



Մասնաճյուղի խորհրդի և ամբիոնների նիստերում պարբերաբար քննարկվել են մայր բուհի գիտական խորհրդի նիստերի որոշումները:

Մշտապես վերահսկվել են ուսումնական և արտալսարանային պարապմունքները: Բոլոր դասախոսներն ապահովված են ուսումնական ծրագրերով և օրացուցային պլաններով:

Նորացվել և արդիականացվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկան, իսկ պաշտպանությունները կազմակերպվել են հիմնականում էլեկտրոնային հավելվածների ներկայացմամբ:

Ամբիոնների վարիչները և փորձառու դասախոսները պարբերաբար կատարել են դասալսումներ. կազմակերպվել են բաց դասեր:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի 4 գիտության թեկնածուներ ստացել են դոցենտի գիտական կոչում, մեկ դասախոս պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

«Ֆրիդրիխ Նաուման» հիմնադրամի հետ համատեղ անցկացվել է դասախոսություն-սեմինար՝ նվիրված ազատականության գաղափարախոսությանը և կապիտալիստական տնտեսակարգի առանձնահատկություններին:

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 26-ի N 9 որոշման համաձայն՝ 2014 թվականի հունվարի 17-ից գործողության մեջ է դրվել «Ներմասնաճյուղային գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը», որի շրջանակում դրամաշնորհներ են տրամադրվել «Երկրների սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների գնահատումը ընդհանրական համաթվի միջոցով», «Մարզի տնտեսության կայուն զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծումը՝ որպես բնակչության կյանքի որակի բարձրացման նախադրյալ (ՀՀ Շիրակի մարզի օրինակով)», «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային բիզնեսի ռազմավարական զարգացման գիտամեթոդական լուծումները» թեմաների հեղինակներին:

Հաշվետու տարում մասնաճյուղի տնօրեն Ս.Դավոյանը մասնակցել է չորս միջազգային գիտաժողովների Շվեդիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Հունաստանում. բոլոր զեկույցները հրատարակվել են, իսկ մեկ հոդված լույս է տեսել ամերիկյան արտոնագրված մասնագիտական հանդեսում:



Պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ և քննարկումներ արտասահմանյան և տեղի ճանաչված մասնագետների մասնակցությամբ:

Մասնագիտական առարկաների դասախոսությունները հիմնականում անցկացվում են ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ նախապես ուսանողին տրամադրելով դասախոսության նյութը (բուհի կայքում տեղադրելով), իսկ գործնական պարապմունքներն անցկացվում են իրավիճակային վերլուծությունների (case-study), գործարար խաղերի և քննարկումների միջոցով:

Մասնաճյուղը նաև ակտիվ գործընկեր է համացանցում. ֆեյսբուքյան էջերը և համալսարանի կայքը հնարավորություն են տալիս ակտիվորեն շփվելու ուսանողների հետ, ինչպես նաև հասանելի դարձնելու քննությունների արդյունքները:

7.2. Եղեգնաձորի մասնաճյուղ

Հաշվետու ժամանակաշրջանում Եղեգնաձորի մասնաճյուղում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ՀՊՏՀ-ում կիրառվող չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան, երկաստիճան կրթական համակարգի բակալավրի և մագիստրոսի ծրագրերով, գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգով: Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերը, ուսումնական աշխատանքների ծավալների բաշխվածության սկզբունքները, ինչպես նաև քննաշրջանի կազմակերպման գործընթացներն ամբողջությամբ համապատասխանեցվել են մայր բուհում կիրառվող ծրագրերին և ընթացակարգերին: Մասնաճյուղում դեռևս չի կիրառվում քննությունների և ստուգարքների կազմակերպման համակարգչային եղանակը:

2013-2014 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի միջանկյալ ստուգարքների և քննությունների արդյունքներով մասնաճյուղում ուսման առաջադիմությունը 87.18% է (տարբեր կուրսերում այն տատանվել է 81-98%-ի միջակայքում): Հաճախումները 92.14% են (տարբեր կուրսերում դրանք տատանվել են 85-94%-ի միջակայքում):

2014 թվականին լույս է տեսել Եղեգնաձորի մասնաճյուղի գիտաժողովի նյութերի ժողովածուն, որտեղ ներառվել են 51 գիտա-



կան զեկուցումներ, որոնցից 8-ի հեղինակները մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ են (այդ թվում՝ մեկ մագիստրանտ): Ընդհանուր առմամբ, հաշվետու տարում մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը տարբեր ամսագրերում հրատարակել է 21 գիտական հոդվածներ:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի նախաձեռնությամբ իրականացվել է «Կրթության որակի բարելավման ազդեցությունը նորարարական տնտեսության զարգացման վրա» հետազոտական աշխատանքը, որում ընդգրկված են եղել նաև մայր բուհի և Գյումրու մասնաճյուղի դասախոսներ: Աշխատանքը նախատեսվում է հրատարակել որպես հետազոտական նյութ, իսկ դրա շրջանակներում ներկայացվել է 3 գիտական հոդված:

Մասնաճյուղն ունի 15 հիմնական հաստիքային աշխատող (այդ թվում՝ 6 պրոֆեսորա-դասախոսական, 9 վարչական և սպասարկող կազմից): Ընդհանուր առմամբ, դասավանդման գործընթացում ներառված է 30 դասախոս: 4-ը ձևակերպվել են որպես հայցորդ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Մասնաճյուղին 2014-2015 ուստարվա ընդունելության պլանով հատկացվել է 60 տեղ, որից 57-ը՝ վճարովի ուսուցման համակարգում և 3-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ: Դիմել է 52 դիմորդ. մրցույթով ընդունվել են 33-ը:

Առկա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 30 տեղ. դիմել է 32 դիմորդ, մրցույթով ընդունվել են 30-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 33 դիմորդ: Ձևավորվել է մեկ խումբ «Կառավարում» մասնագիտությամբ:

2014 թվականի սեպտեմբերին 3 ուսանող Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջից տեղափոխվել է «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտությունների II կուրս:

Հաշվետու տարում բոլոր կրթաձևերում ընդունվել է 96 դիմորդ: Այժմ մասնաճյուղում սովորում է 243 ուսանող, այդ թվում՝ առկա ուսուցման բակալավրիատում՝ 123, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 65, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 55:



2014 թ. մասնաճյուղը թողարկել է 70 շրջանավարտ (առկա ուսուցման բակալավրիատ՝ 42, առկա ուսուցման մագիստրատուրա՝ 28):

Որոշ աշխատանքներ են կատարվել մասնաճյուղի շրջակայքի բարեկարգման ուղղությամբ: Մասնավորապես՝ կանաչապատվել է շենքի հարակից տարածքը, տնկվել է 440 ծառ ու թուփ: Ոռոգման ջուր ունենալու նպատակով կառուցվել է 130 մետր ջրագիծ, որի արդյունքում մոտ 5000 քառակուսի մետր հողատարածք դարձել է ոռոգելի: Իրականացվել են նախնական աշխատանքներ դահլիճ և կաթսայատուն կառուցելու նպատակով: Գործարկվել է մասնաճյուղի կայքը: Ամերիկյան Peace Corps կազմակերպության կողմից 2014 թվականի առաջին կիսամյակից երկու տարի ժամկետով ներգրավվել է մեկ կամավոր, ով անգլերենի լրացուցիչ պարապմունքներ կանցկացնի ուսանողների և դասախոսների հետ:

Նոյեմբերի 22-ին կազմակերպել է ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահի ընտրություն:

2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակում մասնաճյուղի 21, իսկ 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակում 20 ուսանողի տրամադրվել է ուսման վարձի՝ ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում:

2014 թվականի նոյեմբերին «Օրանժ Արմենիա» ընկերությունը մասնաճյուղի սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող 10 ուսանողի տրամադրել է ընդհանուր 1.000.000 ՀՀ դրամ: Ընկերությունը նախատեսել է նաև բուհի տարածքում ապահովել անվճար Wi-Fi կապ:

Հաշվետու տարում, ՀՀ կառավարության գործունեության շրջանակներում, Վայոց ձորի մարզի և ՌԴ Արխանգելսկի մարզի համագործակցության ծրագրերով մասնաճյուղ են այցելել ՌԴ Հյուսիսային (արկտիկական) դաշնային համալսարանի ներկայացուցիչները, ովքեր ունեցել են հանդիպումներ և մասնագիտական քննարկումներ ուսանողների ու դասախոսների հետ: Մասնաճյուղում հանդիպումներ են կազմակերպվել նաև Եվրամիության կրթական ծրագրերի վերաբերյալ:

2014 թվականին մասնաճյուղի ռեսուրսներով մարզում վերապատրաստվել են համայնքային և քաղաքացիական ծառայողներ:



Խնդիրներ

Եղեգնաձորի մասնաճյուղի հիմնական խնդիրներից են գրադարանային ֆոնդի անբավարարությունը, գիտահետազոտական գործունեության ոչ պատշաճ մակարդակը, ինչպես նաև շենքի ջեռուցման համակարգի ցածր արդյունավետությունը:

8. 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համալսարանի բյուջեի եկամուտների և ծախսերի ցուցանիշներն արտահայտված են դրամական փաստացի հոսքերով՝ ներառյալ 2013 թվականի դեկտեմբերը:

8.1. 2014 թվականի բյուջեի կատարման արդյունքները

Համալսարանի փաստացի մուտքերը, ներառյալ 2013 թվականի դեկտեմբերից մինչև 2014 թվականի նոյեմբերը, կազմել են 4.017.9 մլն դրամ՝ տարեկան նախահաշվային 3.765.3 մլն դրամի դիմաց: Գանձման ենթակա ուսման վարձից 152 մլն դրամը գանձվելու է 2015 թվականին:

Եկամուտների առաջացման աղբյուրներն են.

- 01.12.2013 թ. սկզբնական մնացորդը՝ 970.7 մլն դրամ կամ 24.2%.
- բյուջեից ֆինանսավորումը՝ 306.3 մլն դրամ կամ 8%.
- գիտության ֆինանսավորումը՝ 17.4 մլն դրամ՝ նախատեսված 11.7 մլն դրամից, քանի որ տարվա ընթացքում ավելացել են գիտական աշխատանքները.
- վճարովի ուսուցումից ստացված մուտքերը՝ 2.604.1 մլն դրամ կամ 65%.
- այլ եկամուտներ՝ 85.4 մլն դրամ կամ 2.4% (որում ներառված են՝ սննդամթերքի իրացում, ծառայությունների մատուցում,



տեղեկանքների տրամադրում, գրականության և այլ ակտիվների իրացում)։

- դրամաշնորհային «Տեմպուս» ծրագրերից՝ 51.5 մլն դրամ կամ 1.3%։

2013 թվականի դեկտեմբերից մինչև 2014 թվականի նոյեմբերը ներառյալ, փաստացի ելքերը կազմել են 3.172.3 մլն դրամ։ Նախահաշվային ծախսերի համեմատությամբ տնտեսումը կազմել է շուրջ 586.2 մլն դրամ։ Դեկտեմբերի ելքերը կկազմեն մոտ 450 մլն դրամ։

Ընդհանուր ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

1. Աշխատավարձի ֆոնդը (զուտ աշխատավարձը, եկամտային հարկը և նպատակային սոցիալական վճարները միասին) տվյալ ժամանակահատվածում կազմել է 2.359.2 մլն դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 74.4%-ը։
2. Գրասենյակային, տնտեսական, սննդի ձեռքբերման ելքերը կազմել են 26.5 մլն դրամ։
3. Գործուղման և ներկայացուցչական ծախսերը կազմել են 4.8 մլն դրամ։
4. Էլեկտրաէներգիայի, վառելիքի, տրանսպորտի, կապի, ջեռուցման և կոմունալ ծախսերը կազմել են 63.2 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 2%-ը։
5. 2014 թվականին ՀՀ ԽՀՎՀՏ-ին բյուջեի փաստացի վճարները կազմել են 688 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 21,7%-ը, որից.
 - եկամտային հարկ՝ 619 մլն դրամ,
 - պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդ կամ նպատակային սոցիալական վճարներ՝ 30.5 մլն դրամ,
 - շահութահարկ՝ 29.1 մլն դրամ,
 - ավելացված արժեքի հարկ՝ 7.2 մլն դրամ,
 - այլ հարկեր և տուրքեր՝ 2.2 մլն դրամ։2014 թվականին դեռևս առկա է վճարման ենթակա մոտ 40 մլն դրամ։
6. Կազմակերպություններին և անձանց ֆինանսական աջակցության կամ օգնության գումարը կազմել է 51.3 մլն դրամ, որից 44 մլն-ը՝ ՀԵՀ-ին (մնացածը՝ այլ կազմակերպություններին, աշխատակիցներին)։



7. Ուսանողական խորհրդին՝ 7.7 մլն դրամ, որից 6.7 մլն-ը փաստացի ծախսվել է տվյալ ժամանակահատվածում:
8. ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ֆինանսավորում՝ 20.4 մլն դրամ:
9. Գիտության ծախսերը կազմել են 84.9 մլն դրամ, որում ներառվել են նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորումը:
10. Դրամաշնորհային «Տեմպուս» ծրագրերից՝ 122,3 մլն դրամ:
11. Կապիտալ ծախսերը կազմել են 127.8 մլն դրամ կամ ծախսերի 4%-ը:

